

## Հայութիւնը Կը Ոգեկոչէ Հայոց Յեղասպանութեան 109 Ամեակը Հայոց Յեղասպանութեան 1,5 Միլիոն Զոհերը Օսմանեան Կայսրութիւնում Սրի Քաշուեցին Հայ Լինելու Համար. Յայտարարեց Փաշինեան Այսօր Մենք Կանգ Կ'առնենք՝ Յիշելու Հայոց Յեղասպանութեան Ժամանակ Կորսուած Կեանքերն Ու Վերահաստատելու Երբեք Չմոռնալու Մեր Խոստումը. Ըսաւ Պայտըն

Աշխարհի տարածքին սփռուած Հայութիւնը ոգեկոչեց Հայոց Յեղասպանութեան 109 ամեակը: Այս առթիւ դատապարտումի եւ գորակցութեան խօսքերով հանդէս եկան տարբեր երկիրներու ղեկավարներն ու բարձրաստիճան պաշտօնեաները: Բացառութիւն էր Թուրքիան, որուն արտաքին գործիքի տեղի Յեղասպանութեան փաստը:

Երեւանի մէջ բազմազար ժողովուրդ բարձրացան Միծեռնակաբերդի յուշամալի՝ յարգանքի տուրք մատուցելու մեր ժողովուրդի սրբացած նահատակներուն:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրեանի, Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանի եւ երկրի բարձրագոյն ղեկավարութեան հետ Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակի օրուան առիթով այցելեց Միծեռնակաբերդի յուշամալը, ուր ծաղիկներ խոնարհեց Հայոց Յեղասպանութեան զոհերուն յիշատակը յաւերժացնող անմար կրակին մօտ:

### Վարչապետ Փաշինեանի Ելոյթը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ուղերձ լրացնելով Հայոց Յեղասպանութեան 109-րդ տարելիցին առիթով, ուր մասնաւորապէս ըսուած է.

«Այսօր մենք ոգեկոչում ենք Հայոց Յեղասպանութեան, Մեծ Եղեռնի 1,5 միլիոն զոհերի յիշատակը, ովքեր 1915 թուականից Օսմանեան կայսրութիւնում սրի քաշուեցին հայ լինելու համար:

«Այս մասշտաբային ողբերգութիւնը տեղի ունեցաւ առաջին աշխարհամարտի տարիներին, եւ պետականութիւն չունեցող, պետականութիւնը հարիւրամեակներ առաջ կորցրած, պետականութեան աւանդույթը, ըստ էութեան, մոռացած հայ ժողովուրդն աշխարհաքաղաքական խարդաւանքների ու սին խոստումների զոհ դարձաւ՝ գուրկ լինելով առաջին հերթին աշխարհն ու նրանում գործող կանոններն իրեն հասկանալի դարձնելու ընդունակ քաղաքական մտքից:

«Մեծ Եղեռնը համազգային ողբերգութիւն եւ հոգեցնցում դարձաւ մեզ համար, եւ առանց չափազանցութեան մեր ընկերա-հոգեբանութիւնը կանխորոշող գործօն է: Մենք այսօր էլ աշխարհը, մեր միջավայրը, ինքներս մեզ ընկալում ենք Մեծ Եղեռնի հոգեցնցման տիրապետող ազդեցութեան ներքոյ եւ չենք յաղթահարել այդ հոգեցնցումը: Մեծ Եղեռնը, հայրենագրութեամբ դատաւճիւր չէ մեզ համար, որ պիտի կրենք որպէս կորուսեալ հայրենիքի շարունակական փնտրտուք: Մենք պէտք է դադարենք հայրենիքի փնտրտուքը, որովհետեւ գտել ենք այդ հայրենիքը, մեր Աւետեաց երկիրը, որտեղ կաթ եւ մեղր է հոսում: Մեծ Եղեռնի նահատակների ոգեկոչումը մեզ համար պէտք է ոչ թէ կորուսեալ, այլ գտնուած եւ իրական հայրենիքը խորհրդանշի՝ ի դէմս Հայաստանի Հանրապետութեան, որի մրցունակ, օրինական, մտածուած եւ ստեղծագործ քաղաքականութիւններն են, որ կարող են բացառել կրկնութիւն:

«Այլեւս երբեք: Մենք սա ուրիշներին չպէտք է ասենք, այլ ինքներս մեզ: Եւ սա ամենեւին էլ մեղադրանք չէ ինքներս մեր հասցէին, այլ դիտանկիւն, որտեղ մենք, միայն մենք ենք մեր ճակատագրի պատասխանատուն ու տնօրէնը եւ պարտաւոր ենք ունենալ բաւարար միտք, կամք, խորք ու իմացութիւն՝ այդ պատասխանատուութիւնը մեր ինքնիշխան որոշումների ու ընկալումների տիրոջթում կրելու»:

### Նախագահ Պայտընի Ուղերձը

ԱՄՆ նախագահի ձօ Պայտըն հանդէս եկաւ ուղերձով, որուն մէջ մասնաւորաբար ըսուած էր.

«Այսօր մենք կանգ կ'առնենք՝ յիշելու Մեծ Եղեռնի՝ Հայոց Յեղասպանութեան ժամանակ կորսուած կեանքերն ու վերահաստատելու երբեք չմոռնալու մեր խոստումը:

«Դաժանութեան արշաւը սկսաւ 1915 թուականի Ապրիլ 24-ին, երբ օսմանեան իշխանութիւնները Կոստանդնուպոլսոյ մէջ ձերբակալեցին հայ մտաւորականները եւ համայնքի ղեկավարները: Հետագայ օրերու, ամիսներու եւ տարիներու ընթացքին 1,5 միլիոն հայեր տեղահանուեցան, կոտորուեցան կամ մահուան երթի դուրս եկան՝ ընդմիջա կոտորուած թողելով ընտանիքներ ու յաւերժ փոխելով սերունդները:



ԱՄՆ նախագահ Ջո Պայտըն



Հայաստանի ղեկավարութիւնը կ'այցելէ Միծեռնակաբերդի յուշահամալիր

«Մինչ մենք կը սգանք այս ողբերգութիւնը, մենք նաեւ կը պատուենք հայ ժողովուրդին տոկոնութիւնը: Մարդկութեան պատմութեան ամենամութ գլուխներէն մէկը ապրելէ յետոյ՝ վերապրածները սկսան կառուցել աւելի լաւ ապագայ մեր աշխարհին համար: Քաջութեամբ եւ նուիրուածութեամբ անոնք վերակառուցեցին իրենց կեանքը: Անոնք պահպանեցին իրենց մշակույթը: Անոնք ամրապնդեցին երկիրներու

Շար.ը էջ 6

## RED Շարժապատկերի Ցուցադրութիւնը Փաստփնայի Մէջ



Կարօ Փայլան եւ Գատիր Ազըն ֆիլմի ցուցադրութեան աւատին կը պատասխանեն ներկաներու հարցերուն

Անցեալ Հինգշաբթի, Ապրիլի 18-ին, 2024, «Մասիս»-ի հրատարակչականի նախաձեռնութեամբ, ԱՄՆ-ի մէջ առաջին անգամ ըլլալով ցուցադրուեցաւ թուրք պատմաբան Գատիր Ազընի RED (ետ մղում) շարժապատկերը, Փաստփնայի ՀԲԸՄ-ի վաչէ եւ Թամար Մանուկեան մշակութային կեդրոնին մէջ:

Հայոց Յեղասպանութեան եւ Հնչակեան յեղափոխական մեծ

գործիչ Փարամազի կեանքին նուիրուած վաւերագրական ֆիլմի ցուցադրութեան հովանաւորն էր ՄԻՀնչակեան Կուսակցութիւնը:

Նախքան ֆիլմի ցուցադրութիւնը, իր բացման խօսքէն ետք, իրաւաբան Գրիգոր Մոլոյեան հրաւիրեց ներկաները Եղեռնի զոհերու յիշատակի յարգանքի մէկ վայրկեան յոտնկայս

Շար.ը էջ 6



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ֆրանսայի Ուշագրաւ Լռութիւնն Ու Քայլը Այց Տալու

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Հայաստանում Ֆրանսայի դեսպան Օլիվիէ Դըկոտինյին այցելել է Տաւուշի մարզ: Դեսպանի այցն իհարկէ առնչութիւն չի ունեցել Կիրանցում եւ Ոսկեպարում ստեղծուած իրավիճակի հետ, յայտնի իրադարձութիւնների հետ, որ ծաւալուած են Ապրիլի 19-ից ի վեր: Դեսպանն իջեւանում մարզի ղեկավարութեան հետ քննարկել է երկկողմ գործակցութեան, մասնաւորապէս Տաւուշի մարզի տարբեր համայնքների եւ Ֆրանսայի համայնքների միջեւ գործընկերութեան, տարբեր ծրագրերի առնչուող հարցեր:

Չնայած հանգամանքին, որ դեսպանի այցը ոչեւէ ուղիղ առնչութիւն չի ունեցել Տաւուշի սահմանամերձ գիւղերում ստեղծուած բարդ իրավիճակին, այդուհանդերձ ուշագրաւ է երկու հանգամանք: Դեսպանը մարզ է այցելուած հենց այս օրերին՝ այդ բարդ իրավիճակին զուգահեռ, երբ Տաւուշ անուան որեւէ յիշատակում անմիջապէս ասոցացուած է այդ խնդրի հետ: Միեւնոյն ժամանակ, Ֆրանսայի դեսպանի այցը ուշադրութեան է արժանի այն ֆոնին, որ Ապրիլի 19-ից սկսած՝ առ այսօր՝ Ապրիլի 22-ը, հայ-ատրպէյճանական յայտնի պայմանաւորուածութեան մասին գնահատական չի

հնչեցրել Ֆրանսան:

Ինչպէս յայտնի է՝ ողջունել է Գերմանիան, ողջունել է ԱՄՆ, ողջունել է ԵՄ-ն, ողջունել է Թուրքիան, ողջունել է ՆԱՏՕ-ն, իսկ ահա Ֆրանսան գոնէ առայժմ չի տուել գնահատական եւ արդէն իսկ այդ հանգամանքը, որ օրեր շարունակ Փարիզը «հապաեղել» է հնչեցնել գնահատական, արժանի է ուշադրութեան եւ բաւականին խօսուել է, եթէ աւելի ուշ այդուհանդերձ լինի ողջոյն կամ որեւէ այլ արձագանք: Ահա այդ ֆոնին, Ֆրանսայի դեսպանը, այդ իմաստով՝ առաջինը օտարերկրեայ դեսպանների շարքում, որոնք աշխատում են Հայաստանում, մեկնում է Տաւուշի մարզ:

Այդպիսով, Ֆրանսան չկայող ջոնտոնների շարքում, փոխարէնը առաջինն ու առայժմ միակն է Տաւուշ այցելող դեսպանների շարքում: Մա առնուազն թոյլ է տալիս եզրակացնել, որ Ֆրանսայի համար տեղի ունեցողը պարունակում է առնուազն շատ հարցեր, եթէ չասենք՝ այդքան էլ գոհացնող, բաւարարող համաձայնութիւն չէ: Հագիւ թէ Փարիզը լինելով դրանից գոհ, յապաղէր արտայայտել իր գոհունակութիւնն ու ողջոյնը՝ տեղի ունեցողի կապակցութեամբ, եթէ նոյնիսկ Ատրպէյճանից հետ է կանչել իր դեսպանին խորհրդակցութեան համար:

«ԱՌԱՌԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Յեղափոխականներ՝ Արտերկրից

ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԵԱՆ

Քաղաքական դաշտում ինչ-որ տարօրինակ տենդենց է սկսվում: Հիմա էլ ընդդիմադիր ներկայանալու եւ հասարակութեանը փողոց դուրս հանելու, կոնկրետ գործողութիւնների դիմելու մասին յայտարարում են մարդիկ, որոնք գտնուած են արտերկրում: Այստեղ, իհարկէ, այդ անձինք կուսակցութիւններ են հիմնել, ենթադրուած է՝ համակիրների որոշ բանակ ունեն եւ այդ պրոցեսները փորձում են կազմակերպել ու ղեկավարել հեռուից:

Եկէք ընդունենք, որ տեղի ունեցողը նորմալ չէ, մեղմ ասած՝ անազնիւ է. մարդիկ «թնդանօթի միս» չեն, որոնց դուրս հանեն փողոցներ, ոստիկանների հետ բախումների դրդել, բայց կազմակերպիչներն՝ իրենք, արտերկրում տաքուկ նստած վաշեկն կեանքը՝ ակնկալելով, որ իշխանափոխութեան դէպքում կը վերադառնան Հայաստան՝ «յաղթածի կարգավիճակով», վաշեկելով արդէն իշխանութեան պտուղները:

Այս գործելաոճը, թերեւս, յիշեցնում է սփիւռքի պսեվդոհայրենասիրութիւնը: Նկատած կը լինէք՝ արտերկրից ինչպէս են պարբերաբար ռազմատենչ գրառումներ անում, պատերազմական կոչեր հնչեցնում՝ շատ լաւ իմանալով, որ պատերազմի ժամանակ ռազմադաշտ իրենք չեն մեկնելու եւ իրենք չեն զոհուելու թշնամու գնդակից: 1991թ. Գիւնիստում Տէր-Պետրոսեանն այսպիսի դիտողութիւն էր արել՝ ՀԹ-ականներից մէկի դիտարկմանն ի պատասխան. «Վաղն եւեթ հազորդէք արտասահմանի թերթերում, որ Փարիզում եւ Նիւ Եորքում նարինջ ուտող հայն իրաւունք չունի մեզ քաղաքականութիւն թելադրել, որովհետեւ ԼՂ-ում եւ Հայաստանում ոչ թէ փարիզցին է զոհուած, այլ հայաստանցին: Հայաստանցի երեխան է այստեղ սովից մեռնում»:

Վերադառնանք քաղաքական դաշտ. համաձայնութեամբ՝ իսկապէս տհաճ է գործելաոճը, որ ականատես ենք լինում Հայաստանում: Բայց սա նաեւ իր պատճառներն ունի. տիտղոսային ընդդիմութիւնը, որ խորհրդարանում լինելու մանդատ ստացաւ, խոստացել էր «մինչեւ քոքը մաշեցնել», յետոյ փողոցից ԱԺ վերադարձան իրենց «օրակարգով», այն է՝ վարչապետին անվստահութիւն յայտնելը, բայց, ինչպէս տեսնում էք, անգամ իմպիւզմենտի նախաձեռնութիւն չսկսեցին, ուր մնաց՝ պրոցեսներ գեներացնէին: Ասել է, թէ խորհր-

դարանական ընդդիմութիւնն իսպառ ձախողուել է, եւ հիմա արդէն «փողատէր» այլ ուժեր են փորձում լցնել դաշտը: Այլապէս, ինչպէ՞ս մեկնաբանել, օրինակ, պաշտպանութեան նախկին նախարար Արշակ Կարապետեանի գործողութիւնները՝ հեռուից կուսակցութիւններ ստեղծելը, պարբերաբար հարցազրոյցներ տալն ու գործողութիւններով սպառնալը: Նոյնը կարելի է ասել նաեւ ԴԱՀԿ նախկին պետ Միհրան Պօղոսեանի՝ «Քեթրինի Միհրանի» մասին, որը ՀՀ-ում գտնուելով հետախուզման մէջ, հեռուից կուսակցութիւն հիմնեց ու կրկին նոյն գործելաոճն է որդեգրել:

Իսկ կուսակցութիւնները, որոնք իսկապէս քաղաքական միտք են գեներացնում, իսկապէս քաղաքական օրակարգի մասին խօսում, մղուել են երկրորդ, երրորդ պլան եւ նրանց ասելիքը ոչ միշտ է լաւում, իսկ ռեսուրսները ոչ միշտ են բաւականացնում քաղաքական պրոցեսներ գեներացնելու համար:

Այնպէս որ, տեղի ունեցողը խօսում է հայաստանեան քաղաքական դաշտի՝ մեղմ ասած վատ վիճակի մասին: Դաշտ, որի փոշիացման ուղղութեամբ տարիներ շարունակ հետեւողական ջանքեր են գործադրուել, ու հիմա այդ ամէնը սկսել է իր վատ «պտուղները տալ»:

«ՌԱՏԱՐ»

Որտեղ Կը Յայտնուեն Ոսկեպարի Եկեղեցին Ու Կիրանցի Դպրոցը՝ Սահմանագատումից Յետոյ



ՆԱԸՆ ՄԱՆԱՍԵԱՆ

«Փաստերի ստուգման հարթակը» գրել է, որ Google Maps-ում ներկայացուած՝ Տաւուշում սահմանագատման ենթակայ հայ-ատրպէյճանական սահմանը համընկնում է 1976 թուականի խորհրդային Միութեան ԳՇ համապատասխան տեղանքի՝ խորհրդային Հայաստանի ու խորհրդային Ատրպէյճանի վարչական սահմանների վերաբերեալ քարտէզին:

FIP.am-ը փորձեց հասկանալ, թէ որտեղ կը յայտնուեն Ոսկեպարի միջնադարեան հայկական եկեղեցին ու Կիրանցի դպրոցը՝ սահմանագատման արդիւնքում:

Այսպէս, 6-7-րդ դարերում կառուցուած Ոսկեպարի Սուրբ Աստ-

ուածածին եկեղեցին ԽՄ ԳՇ քարտէզով սահմանագատման դէպքում մնում է հայկական կողմում, սակայն ատրպէյճանական սահմանից ընդամէնը 10-20 մեթր հեռաւորութեան վրայ:

Ինչպէս ԳՇ քարտէզում, այնպէս էլ Google Maps-ում, Կիրանցի դպրոցը տեղակայուած է Ատրպէյճանի հետ սահմանից ուղիղ գծով մօտ 360 մեթր հեռաւորութեան վրայ:

Այսպիսով, Տաւուշում 1976 թուականի՝ ԽՄ ԳՇ քարտէզներով սահմանագատման հետեւանքով, չնայած Ոսկեպարի եկեղեցին ու Կիրանցի դպրոցը մնում են հայկական կողմում, սակայն յայտնուած են Ատրպէյճանի սահմանից չնչին հեռաւորութեան վրայ:

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնոր հոն արտայայտուող բոլոր տեսակետները

Advertisement for MASSIS Weekly, featuring the logo, contact information for the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA, and subscription rates.



ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Եւ Ատրպէյճանի Սահմանի Եզրտման Առաջին Սահմանային Սիւնը



Հայաստանի Եւ Ատրպէյճանի Հանրապետութեան սահմանի համար տեղադրուած առաջին սահմանային սիւնը

2024 թուականի Ապրիլ 23-ին Հայաստանի Հանրապետութեան Եւ Ատրպէյճանի Հանրապետութեան սահմանին չափումներու հիման վրայ, տեղաչափերու ճշգրտման աշխատանքներու ծիրին մէջ տեղադրուած է առաջին սահմանային սիւնը:

Երկու երկիրներու փորձագիտական խումբերու աշխատանքները կը շարունակուին:

Ինչպէս աւելի վաղ հաղորդուած էր, Հայաստանի Հանրապետութեան Եւ Ատրպէյճանի Հանրապետութեան միջեւ պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգութեան հարցերով յանձնաժողովի Եւ Ատրպէյճանի Հանրապետութեան Եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական յանձնաժողովի 8-րդ հանդիպման արդիւնքներով ձեռք բերուած պայմանաւորուածութիւններու համաձայն՝ Հայաստանի Հանրապետութեան Եւ Ատրպէյճանի Հանրապետութեան սահմանին երկու երկիրներու փորձագիտական խումբերը սկսած են տեղաչափերու ճշգրտման գործընթացը՝ հիմնուելով տեղանքին մէջ չափումներու վրայ:

Տաւուշի Սէջ Միջադէպերու Առնչութեամբ «Մարտական Եղբայրութեան» Եօթը Անդամներ Ձերբակալուած Է

«Մարտական Եղբայրութիւն» հասարակական կազմակերպութեան եօթը անդամ ձերբակալուած է Տաւուշի մարզին մէջ միջպետական ճանապարհէր փակելու ընթացքին առերեւոյթ խուլիկանական արարքներու կատարման մէջ մասնակցութեան կասկածանքով, հաղորդած է Քննչական կոմիտէն:

Ապրիլ 21-ին՝ ժամը 15:50-ի սահմաններուն, Յաղթանակի «Վողխոզ» կոչուող հատուածին մէջ՝ դէպի Բազրատաշէն բնակավայրի ուղղութեամբ, «Մարտական Եղբայրութիւն» կազմակերպութեան 3 անդամներ Եւ խումբ մը այլ քաղաքացիներ փակած են միջպետական ճանապարհը: Մէկ այլ բնակիչ պահանջած է բանալ զայն, որմէ յետոյ իր «Ուազ» ինքնաշարժով առաջ ընթացած է, սակայն քաղաքացիները, ըստ Քննչականին, խոչընդոտելով փոխադրամիջոցներուն ընթացքը՝ չեն թոյլատրած:

Ըստ հաղորդագրութեան՝ խումբ մը քաղաքացիներ ձեռքերով հարուածած Եւ կոտրած են ինքնաշարժի դիմապակին, ապա դիմած են փախուստի: Իսկ արդէն ճանապարհի բացուելէն յետոյ Մ.Ա.Ն վիճաբանութեան մէջ մտած է Ազգային ժողովի «Հայաստան դաշինք» խմբակցութեան պատգամաւոր Գառնիկ Դանիէլեանի հետ, ձեռքով հարուածած Եւ անոր Եւ պատճառած են մարմնական վնասուածք:

Նախաձեռնուած է քրէական վարույթ:

Հայաստանը 16 Կտով Բարելաւած Է Դիրքերը Դրական Խաղաղութեան Սէջ

«Տնտեսութեան Եւ Խաղաղութեան միջազգային հիմնարկ» (IEP) վերլուծական կեդրոնը հրատարակած է Դրական Խաղաղութեան զեկոյցը (Positive Peace Report 2024), որուն մէջ ներառուած է 163 երկիր, այդ շարքին՝ Հայաստանը:

Ըստ զեկոյցի հեղինակներուն՝ դրական Խաղաղութեան ամենամեծ բարելաւումները տեղի ունեցած են Ուզպեքիստանի, Հայաստանի, Կամպուչի, Թայլանդի Եւ Իրլանտայի մէջ:

Հայաստանը վարկանշին մէջ կը զբաղեցնէ 54-րդ տեղը՝ 2.826 միաւորով: Մեր երկիրը իր դիրքը բարելաւած է 16 կէտով: Հայաստանը ներառուած է դրական Խաղաղութեան բարձր վիճակի մէջ գտնուող երկիրներու ցանկին մէջ:

Տարածշրջանի երկիրներու շարքին Հայաստանը երկրորդն է՝ զիջելով Վրաստանին, որ 2.748 միաւորով 49-րդ տեղն է:

Այնուհետեւ կու գայ Թուրքիան (91-րդ հորիզոնական, 3.295 միաւոր, 28 կէտով անկում), որուն կը յաջորդեն Ռուսաստանը (93-րդ հորիզոնական, 3.319 միաւոր, 12 կէտով անկում), Ատրպէյճանը (104-րդ հորիզոնական, 3.428 միաւոր, 4 կէտով վերելք), Իրանը (124-րդ հորիզոնական, 3.628 միաւոր, 3 կէտով անկում):

Ռուբէն Վարդանեանը Պաքուի Բանտին Սէջ Հացադուլ Յայտարարած Է

2023-ի Սեպտեմբեր 28-էն Պաքուի բանտին մէջ գտնուող Արցախի նախկին պետական նախարար Ռուբէն Վարդանեանը Ապրիլ 5-էն հացադուլ յայտարարած է, կը տեղեկացնէ Վարդանեանի ընտանիքը:

Արցախի նախկին պետական նախարարը կը պահանջէ անյապաղ Եւ անվերապահօրէն ազատ արձակել զինք Եւ Պաքուի մէջ ապօրինաբար պահուող միւս հայ բանտարկեալները:

Ընտանիքը կը նշէ, որ հացադուլը սկսելէ յետոյ դադարեցուած են անոր հեռախօսազանգերը: Ընտանիքը սա միջազգային իրաւունքի բոլոր կանոններու բացառապէս խախտում կ'որակէ, նաեւ նշելով, որ Յունուարին սպասուող դատաքննութիւնը առանց պատճառի տեղափոխուած է մինչեւ Մայիս:

Վարդանեանի որդին՝ Դաւիթ Վարդանեանը յայտնած է, որ խորապէս մտահոգուած է հօր առողջութեամբ Եւ վիճակով: «Աւելի քան 200 օր մենք չենք տեսել նրան: Ապրիլի 5-ից՝ հացադուլն սկսելուց ի վեր, նրա հետ բացարձակապէս կապ չենք ունեցել», - նշած է Դաւիթ Վարդանեան:

Վարդանեանի ընտանիքը կը պահանջէ, որ Ատրպէյճանի կառավարութիւնը անյապաղ մուտքի հնարաւորութիւն տայ Միջազգային կարմիր խաչին՝ Ռուբէն Վարդանեանի Եւ միւս բանտարկեալներուն վիճակը գնահատելու համար, վերականգնէ հեռախօսակապը, Հայաստանի Եւ Ատրպէյճանի միջեւ որեւէ խաղաղ համաձայնագիր պէտք



Արցախի նախկին պետական նախարար՝ Ռուբէն Վարդանեան

է ներառէ բոլոր հայ բանտարկեալներուն ազատ արձակումը, «COP 29»-ը պէտք է տեղի ունենայ Ատրպէյճանի մէջ՝ առանց նշուած քայլերու իրագործման:

Ատրպէյճանական կողմը Ռուբէն Վարդանեանի հացադուլին մասին չէ յայտնած:

Ռուբէն Վարդանեանը Սեպտեմբեր 27-ին Լաչինի միջանցքի Հաքարիի կամուրջի անցակէտին վրայ ձերբակալուեցաւ, ապա 4 ամիսով կալանաւորուեցաւ: Ան կը մեղադրուի «հակապետութեան ֆինանսաւորման», «ապօրինի զինուած կազմաւորումներու կամ խմբաւորումներու ստեղծման Եւ գործունէութեան մասնակցելու», «Ատրպէյճանի պետական սահմանը ապօրինի հատելու» յօդուածներով:

Արցախի Հայերու Տեղահանում Եւ Մարդու Իրաւունքներու Խնդիրներ. Պետական Քարտուղարութեան Զեկոյցը

ԱՄՆ-ի Պետական Քարտուղարութիւնը հրատարակած է մարդու իրաւունքներու տարեկան զեկոյցը, որ արձանագրուած է Ատրպէյճանի ռազմական գործողութեան հետեւանքով 2023-ի աշնան Լեռնային Ղարաբաղէն աւելի քան 100 հազար հայերու տեղահանման փաստը:

Նշուած է, որ այդ յաջորդած է 2022-ի Դեկտեմբերէն մինչեւ յաջորդ տարուայ Սեպտեմբերը Լաչինի միջանցքի փակման, երբ միայն միջազգային մարդասիրական օգնութիւն կը թոյլատրուէր: Կը հաղորդուէր Լեռնային Ղարաբաղէն միայն դուրս գալու՝ միակողմանի երթեւեկութեան մասին:

Տարուան ընթացքին ատրպէյճանական ուժերը հարուածած են Հայաստանի ներսը որոշակի ենթակառուցուածքներու, մասնաւորապէս Արարատի մարզի Երասխ գիւղին մօտ կառուցող մետաղագործական գործարանի շինարարական հրապարակին, որուն հետեւանքով երկու քաղաքացիական անձ վիրաւորուած է, ըսուած է հաղորդման մէջ:

Ներհայաստանեան խնդիրներուն Եւս անդրադարձ կայ. զեկոյցը կը նշէ, որ Հայաստանի կառավարութիւնը ամբարպնդած է փոսթուլթեան դէմ պայքարի իր հաստատութեանական շրջանակը՝ կիրառելով նոր հակափոստութեան ռազմավարութիւնը շարք մը ուղղութիւններով:

Բազմաթիւ ոչ-կառավարական կազմակերպութիւններ, ըստ Պետական Քարտուղարութեան, հա-



ղորդած են անազատութեան մէջ գտնուող անձերու նկատմամբ իրաւապահներու կողմէ բռնութեան կամ խոչընդոտումներու դէպքերու զգալի աճի մասին Եւ կը պնդեն, որ նման վարքագիծը կը դառնայ համակարգային Եւ յաճախ կը մնայ անպատիժ:

Պետական Քարտուղարութեան տարեկան զեկոյցին մէջ նշուած է, որ կառավարութիւնը միայն սահմանափակ հաւաստիքայլեր կատարած է նախկին կամ գործող պետական պաշտօնեաներու Եւ իրաւապահներու կողմէ մարդու իրաւունքներու ենթադրեալ խախտումները հետաքննելու Եւ պատժելու համար: Ինչպէս նաեւ կ'ըսուի, որ հաղորդագրութիւններ չկան 2020 թուականի ռազմական գործողութիւններու ընթացքին Հայաստանի զինուած ուժերու կամ անհատներու կողմէ կատարուած ենթադրեալ շարաշահումներուն վերաբերեալ կառավարութեան հետաքննութեան ընթացքի որեւէ յառաջընթացի մասին:



ԼՈՒՐԵՐ

### Պաքուի Յայտարարութիւնները ԶԳ Բանակի Արդիականացման Մասին, Կ'անհանգստացնեն Մեզ. Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան գրոյց ունեցած է խումբը մը Բիտանացի լրագրողներու հետ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան գրոյց ունեցած է խումբը մը Բիտանացի լրագրողներու հետ: Անոնցմէ մին տուած է հետեւեալ հարցը. «British Petroleum-ը վերջին չորս տարիներու ընթացքին Ատրպէյճանին 35 միլիարդ տոլարի քարիւղ ու կազ մատակարարած է, այդ Ատրպէյճանի ընդլայնուող պաշտպանութեան պիւտճէի քառասպտիկն է. Միացեալ Թագաւորութիւնը այդ կերպ լծակ ունի Ատրպէյճանի նկատմամբ, կ'ուզէիք արդեօք՝ Միացեալ Թագաւորութիւնը այդ լծակը օգտագործեր: Ատրպէյճանը մեծ քանակութեամբ գէնք կը ստանայ Ռուսաստանէն, Թուրքիայէն, Իսրայէլէն, Հայաստանը կը ստանայ Ֆրանսայէն ու Հնդկաստանէն, կ'ուզէիք, որ այլ երկիրներէ ալ ստանար, որ հնարաւորութիւն ունենար ինքնապաշտպանուելու»: Հարցին Փաշինեանը պատասխանած է. «Ես չէի ցանկանայ մեկնաբանել առեւտրային գործունէութիւնը, ներդրումները, որ տեղի են ունենում հարեւան երկրներում, ցանկացած ներդրում պէտք է ունենայ շահագրգռութիւն, որ պէսզի ներդրման միջավայրում ու տարածաշրջանում լինի խաղաղութիւն եւ հաստատուի խաղաղութիւն: Ընդհանուր առմամբ՝ կարծում եմ, որ խաղաղութեան հաստատումը միջազգային հանրութեան եւ ներդրողների հետաքրքրութիւնների տիրոջութում է, բայց, ի հարկէ, ես ուզում եմ

արձանագրել, որ խաղաղութեան առաջին շահառուն հէնց Հայաստանը եւ Ատրպէյճանն են: Այս առումով, ըստ վարչապետին, Ատրպէյճանէն հնչող շարք մը յայտարարութիւններ, որ կը վերաբերին ՀՀ բանակի բարեփոխումներուն եւ արդիականացման, կ'անհանգստացնեն: «Դուք ձեռք նկատեցիք, եթէ մենք տեսնենք Ատրպէյճանի եւ Հայաստանի ռազմական պիւտճէների յարաբերակցութիւնը, այդտեղ էական անհաւասարակչութիւն կայ, այդ յարաբերակցութիւնը ձեւաւորում է նաեւ ձեր նշած գործարքների միջոցով Ատրպէյճանի եկամուտների շնորհիւ, բայց նոյնիսկ այս պայմաններում Ատրպէյճանը շատ յարձակողական է արձանագրում ՀՀ Ձինուած Ուժերի բարեփոխումներին, սպառազինութեան ու տեխնիկայի ձեռքբերումներին, չնայած բոլոր հասկանում ենք, որ դրանք ունեն բացառապէս պաշտպանական նշանակութիւն, նաեւ որեւէ երկիր չի կարող վիճարկել որեւէ այլ երկրի՝ մարտունակ բանակ ունենալու իրաւունքը: «Ատրպէյճանը բարձրացնում է այդ հարցերը, մասնաւորապէս մեր կողմից սպառազինութիւնների ձեռքբերման, որը Ատրպէյճանի ձեռք բերածի 15-20 տոկոսից աւել չէ՝ եւ ֆինանսական, եւ ծաւալի առումով, եւ հիմնականում կրում է պաշտպանական բնոյթ, բայց իրենք նաեւ այդ յայտարարութիւններն անարձագանք չեն թողնում:

### ԵՄ-ն Լիովին Կ'աջակցի Հայաստան-Ատրպէյճան Բանակցային Գործընթացին. Փաշինեան Ընդունած է Թոյվո Քլաարը

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է Հարաւային Կովկասի ու Վրաստանի ճգնաժամի հարցերով Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Թոյվո Քլաարը: Հանդիպման մասնակցած է նաեւ Հայաստանի Հանրապետութեան մէջ ԵՄ պատուիրակութեան ղեկավար, ղեկավար վասիլիս Մարակոսը: Անդրադարձ կատարուած է տարածաշրջանային իրավիճակին, Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան պայմանագրի

մասնագտման գործընթացին: Քննարկուած են Հայաստան-Եւրոպական Միութիւն համագործակցութեան ու անոր հետագայ զարգացման վերաբերող հարցերը: Թոյվո Քլաարը եւս մէկ անգամ նշած է, որ ԵՄ-ն լիովին կ'աջակցի Հայաստան-Ատրպէյճան բանակցային գործընթացին՝ համապարփակ ու տեւական կարգաւորման նպատակով, ինչպէս նաեւ 1991թ. Ալմա-աթայի հռչակագրի հիման վրայ սահմանազատման գործընթացը մեկնարկի պայմանաւորուածութեան:

### Փութինն Ու Փաշինեանը Շուտով Պիտի Կարեւան Անձամբ Քննարկել Բոլոր Հարցերը. Տմիթի Փետրով

Ռուսաստանի Դաշնութեան նախագահի մամուլի քարտուղար Տմիթրի Փետրով յայտնած է, որ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինը եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը կարճաժամկէտ հեռանկարի մէջ պիտի կարենան անձամբ քննարկել տարբեր հարցեր, այդ շարքին՝ Տաւուշի մարզէն Ռուսաստանի սահմանապահ կէտերու դուրսբերման հարցը:



Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Տմիթրի Փետրով

Անդրադառնալով Տաւուշի մարզէն Ռուսաստանի սահմանապահ անցակէտերը դուրս բերելու վերաբերեալ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտարարութեան՝ Փետրով ըսած է, որ այդ առումով ազդանշաններ չեն եղած հայկական կողմէն:

«Կ'ակնկալենք, որ կարճաժամկէտ հեռանկարի մէջ նախագահ Փութինն ու վարչապետ Փաշինեանը հնարաւորութիւն պիտի ունենան անձամբ քննարկելու այս եւ, անհրաժեշտութեան պարագային, այլ արդիական հարցեր», - նշած է ան:

Օրեր առաջ, անդրադառնալով Տաւուշի մարզի ուղղութեամբ Ատրպէյճանի հետ սահմանի որոշ հատուածներուն մէջ առկայ ռուսական յենակէտերը հանելու վերաբերեալ հարցին՝ վարչապետ Նիկոլ Փաշինեան պատասխանած էր. «Ռուսական յենակէտերն այդտեղ յայտն-

ուել են այլ իրադրութեան բերումով: Այն, ինչ տեղի է ունենում հիմա, իրադրութեան հական փոփոխութիւն է, որը պէտք է իր ազդեցութիւնն ունենայ բոլոր ուղղութիւններով: Դա նշանակում է, որ մենք առաջնագիծ չունենք, ունենք սահման, իսկ սահմանը խաղաղութեան նշան է, իսկ դա նշանակելու է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանապահները, իրար հետ փոխգործակցելով, ինքնուրոյն ի վիճակի են լինելու իրականացնել սահմանի պահպանութիւն»:

### G7-ի Արտաքին Գործերու Նախարարները Յայտարարութիւն Տարածած Են Հայ-Ատրպէյճանական Կարգաւորման Մասին

G7-ի երկիրներու արտաքին գործերու նախարարները համատեղ յայտարարութիւն տարածած են հայ-ատրպէյճանական կարգաւորման վերաբերեալ: Յայտարարութեան մէջ կ'ըսուի. «Կոչ կ'ընենք Հայաստանին եւ Ատրպէյճանին լիովին հաւատարիմ մնալու խաղաղ գործընթացին՝ հասնելու արժանապատիւ եւ տեւական խաղաղութեան՝ հիմնուած ուժի չկիրառման, ինքնիշխանութեան յարգման, սահմաններու անխախտելիութեան եւ տարածքային ամբողջականութեան սկզբունքներուն վրայ: Մենք կը յիշեցնենք կողմերուն համատեղ յայտարարութիւնը, որ հրապարակուած է 2023 թուականի Դեկտեմբեր 7-ին, եւ կոչ կ'ընենք անոնց պահպանելու համագործակցութեան այս ոգին իրենց հետագայ փոխա-

դարձ գործողութիւններուն մէջ: «Հետագայ մագլցումը անընդունելի պիտի ըլլայ: G7-ը եւ անոր անդամները պատրաստ են աջակցելու հետագայ կառուցողական շփումներուն բոլոր մակարդակներով, մասնաւորապէս՝ ԵՄ-ի եւ ԱՄՆ-ի կողմէ տրամադրուած բանակցային մեխանիզմներուն միջոցով, որոնց անխոնջ ջանքերը մենք բարձր կը գնահատենք: Մենք կը վերահաստատենք 1991 թուականի Ալմա-աթայի հռչակագրին հաւատարիմ մնալու կարեւորութիւնը, որուն մէջ Հայաստանն ու Ատրպէյճանը կը ճանչնան իրար տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը: Մենք կոչ կ'ընենք ընդլայնելու տարածաշրջանային համագործակցութիւնը եւ բանալու բոլոր սահմանները՝ ներառեալ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանը»:

### «Մենք Շատ Գոհ Ենք». Ալիեւը՝ Փութինին

«Մենք շատ գոհ ենք». Ալիեւը՝ Փութինին Ատրպէյճանը շատ գոհ է այն բանէն, թէ ինչպէս կը զարգանան Ռուսաստանի հետ յարաբերութիւնները: Այս մասին յայտնած է Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը Մոսկուայի մէջ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի հետ դէմ-առ-դէմ հանդիպման ժամանակ: «Մենք շատ գոհ ենք այն բանէն, թէ ինչպէս կը զարգանան

մեր յարաբերութիւնները: Արդէն երկու տարիէ աւելի է՝ մենք կ'աշխատինք Դաշնակցային փոխգործակցութեան մասին հռչակագրի շրջանակներուն մէջ, որ ստորագրած ենք յատեղ՝ Կրեմլում, 2022 թուականի Փետրուարին, եւ որ հիմնական քաղաքական փաստաթուղթն է, որ կը կանխորոշէ մեր յարաբերութիւններուն առաջանցիկ զարգացումը ապագային», - ընդգծած է Ատրպէյճանի նախագահը:



# Թուրքիոյ Նախագահը Դիմած Է Հայաստանին՝ Ցեղասպանութեան Հարցով


Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիփ Էրտողանը Իրաքէն վերադառնալուց յետոյ պատասխանած է մամուլի ներկայացուցիչներու հարցումներուն:

Օդանաւին մէջ լրագրողներու հետ գրոցին ընթացքին պետութեան ղեկավարը ըսած է, որ եկած է ժամանակը՝ «հրաժարելու պատմական անհիմն յիշողութիւններէն՝ Հայաստանի հետ յարաբերութիւններուն մէջ նոր իրատեսական ճանապարհային քարտէջ մշակելու համար»:

«Տարածաշրջանին մէջ այժմ նոր կարգ կը հաստատուի. ժամանակն է մէկ կողմ դնել անհիմն քիչները: Իրական փաստերու վրայ հիմնուած գործելը միշտ աւելի լաւ է, քան իրականութենէն բաժնուած պատրանքային պատմական պատմութիւններուն հետեւիլը», - ըսած է ան:

Ըստ էրտողանի՝ սա գիտակցած է նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Պատմաբանները կը վերլուծեն պատմական գործընթացներու ընթացքին տեղի ունեցածը. մենք ի սկզբանէ շատ բաց եղած ենք այս հարցով եւ յայտարարած ենք, որ կրնանք բանալ մեր արխիւները եւ մենք այդ կատարեցինք», - յաւելած է Թուրքիոյ ղեկավարը՝ նկատի ունենալով Ցեղասպանութեան գոր-



Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիփ Էրտողան

ծողութիւններուն ընդունումը:

Ան յոյս չայտնած է, որ Հայաստանը կ'ընտրէ ուղի մը, որ թոյլ կու տայ դուրս գալ «խաւարէն, որուն մէջ, անոր խօսքով, Հայաստանին թակարդած է Սփիւռքը», եւ նոր սկիզբ դնել դէպի պայծառ ապագայ:

«Հնարաւորութիւններու դռները յաւերժ բաց չեն մնար: Անոնք պէտք է օգտագործուին, քանի դեռ բաց են», - ըսած է էրտողան՝ նշելով, որ «ոչ միայն Սփիւռքը, այլ նաեւ շատ այլ սաղրիչներ» կը փորձեն ազդել Հայաստանի վրայ:

# ԱՄՆ Կը Հերքէ՝ Պրիւքէի Մէջ Հայաստանի Հետ Ռազմական Փաստաթուղթի Մասին Պնդումները

ԱՄՆ Պետական Քարտուղարութեան մամուլի ծառայութիւնը արձագանգած է ատրպէյճանական լրատուամիջոցներու պնդումներուն այն մասին, որ Ապրիլ 5-ին Պրիւքէի մէջ կայացած Հայաստան-Եւրոմիութիւն-ԱՄՆ համաժողովի շրջանակին մէջ ռազմական բնոյթի փաստաթուղթ ստորագրուած է:

Որոշ լրատուամիջոցներ հրապարակած էին նոյնիսկ գոյութիւն չունեցող փաստաթուղթին լուսանկարը:

Պետական Քարտուղարութիւնը ատրպէյճանական պետական գործակալութեան հարցումին ի պատասխան՝ չայտնած է, որ նշուած «փաստաթուղթ» մաքուր ապատեղեկատուութիւն է, գոյութիւն չունի:

«Այս փաստաթուղթը մաքուր ապատեղեկատուութիւն է. անվտանգութեան հարցեր օրակարգին վրայ չեն եղած: Մենք ձեզ կոչ կ'ընենք ուսումնասիրելու Ապրիլ 5-ին Պրիւքէի մէջ կայացած եռակողմ հանդիպման ար-

դիւնքներով ԵՄ-ի եւ Հայաստանի հետ համատեղ մամուլի հաղորդագրութիւնը: ԵՄ-ի եւ Հայաստանի հետ պրիւքէյեան հանդիպումը կեդրոնացած էր բացառապէս Հայաստանի տնտեսական դիմակայունութեան վրայ, քանի որ երկիրը կ'աշխատի իր առեւտրային գործընկերութիւններու բազմազանեցման եւ մարդասիրական կարիքներու լուծման ուղղութեամբ, ինչպէս նաեւ աջակցելու Հայաստանի ընթացիկ բարեփոխումներուն, ներառեալ այնպիսի ոլորտներու մէջ, ինչպիսիք են ժողովրդավարութիւնը եւ օրէնքի գերակայութիւնը», - յայտարարած է Պետական Քարտուղարութիւնը:

Յիշեցնենք՝ նախօրէին ՀՀ Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարած էր, որ ատրպէյճանական լրատուամիջոցներուն մէջ հրապարակուած փաստաթուղթը կեղծ է, նման հարցեր պրիւքէյեան հանդիպման օրակարգին վրայ չեն եղած:

# Caucasus Heritage Watch-ը Կ'ահագանգէ՝ Աւերուած Է Շուշիի 177-Ամեայ յուշարձան Սբ. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցին

# Ոսկեպարի Եկեղեցին Պիտի Մնայ Հայաստանի Տարածքին Մէջ



Տաւուշի մարզի Ոսկեպար գիւղին մէջ գտնուող՝ 6-7-րդ դարերու Սուրբ Աստուածածին եկեղեցին

Հայաստանի փոխվարչապետ, Ատրպէյճանի հետ սահմանազատման հարցերով յանձնաժողովի նախագահ Մհեր Գրիգորեանի գրասենեակը հերքած է շրջանառուող խօսակցութիւնները, թէ Տաւուշի մարզի Ոսկեպար գիւղին մէջ գտնուող՝ 6-7-րդ դարերու Սուրբ Աստուածածին եկեղեցին պիտի յանձնուի Ատրպէյճանին:

Մհեր Գրիգորեանի գրասենեակէն «Արմէնփրես»-ին հաւաստիացուցած են, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման վերաբերեալ պայմանաւորուածութիւնները կեանքի կոչելէ յետոյ Ոսկեպարի եկեղեցին պիտի մնայ Հայաստանի տարածքին մէջ:

Նշենք, որ Տաւուշի մարզի սահմանամերձ գիւղերու որոշ բնակիչներ եւ Երեւանէն ժամանած հասարակական գործիչներ ու աթիւրիսթներ փորձած էին խոչընդոտել նախատեսուած ակնկէրծ-

ման աշխատանքները:

Իրաւապահները բնակիչներուն կոչ ըրած էին, յորդորած էին հեռանալ ակնապատ տարածքներէն՝ անցանկալի պատահարներէ խուսափելու համար, ինչն ալ պարբերաբար լարուածութիւն յառաջացուցած էր իրաւապահներուն եւ քաղաքացիներուն միջեւ: Հաւաքուածները պնդած էին, թէ եկեղեցին պիտի մնայ Ատրպէյճանի տարածքին մէջ:

Աւելի վաղ նշուած էր, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի որոշմամբ ստեղծուած է «Հայաստանի Հանրապետութեան եւ Ատրպէյճանի Հանրապետութեան միջեւ պետական սահմաններու սահմանագատման եւ սահմաններու անվտանգութեան յանձնաժողովին» կից աշխատանքային խումբ, որուն մէջ ընդգրկուած են նաեւ վարչական ղեկավարներ եւ բնակիչներ Ոսկեպար, Կիրանց, Բաղանիս եւ Բերքաբեր բնակավայրերէն:



Քորնելի համալսարանի Caucasus Heritage Watch հետազոտական նախաձեռնութիւնը կ'ահագանգէ՝ 2023 թուականի Դեկտեմբեր 28-էն մինչեւ 2024 թուականի Ապրիլ 4-ը ինկած ժամանակահատուածին աւերուած է Շուշիի 177-ամեայ յուշարձան Սբ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին:

Նախաձեռնութիւնը կը նշէ, որ այս կերպ Ատրպէյճանը կոպտօրէն խախտած է Արդարադատութեան միջազգային դատարանի 2021 թուականի Դեկտեմբերի որոշումը:

ՄԱԿ Արդարադատութեան միջազգային դատարանի 2021 թուականի Դեկտեմբեր 7-ի վճիռով Արդպէյճանը պարտաւոր է ապահովել 2020 թուականի հակամարտութեան հետ առնչութիւն ունեցող գերեզմանները բոլոր մարդոց անվտանգութիւնը, ձեռնարկել բոլոր քայլերը՝ կանխելու ցեղապաշտական ատելութեան եւ խտրականութեան հրահրումն ու նպաստումը, այդ շարքին՝ պաշտօնեաներու եւ հանրային հիմնարկներու կողմէ, որոնք կը թիրախաւորեն ծագումով հայ մարդիկը, ինչպէս նաեւ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը՝ կանխելու եւ պատժելու վանտալիզմի դրսեւորումները հայկական մշակութային ժառանգութեան նկատմամբ, ներառ-

եալ՝ պաշտամունքի վայրերը, յուշարձանները, գերեզմանատները եւ այլն:

Caucasus Heritage Watch-ը կը նշէ, որ Կանաչ ժամ (կանաչ մատուռ) կոչուող եկեղեցին հայերը կառուցած են 1847 թուականին: Այն վնասուած է 2020 թուականի պատերազմին ժամանակ: Պատերազմէն յետոյ Ռուս ուղղափառ եկեղեցուց Պաքուի թեմը խոստացած էր վերականգնել գայն, սակայն, փաստ է, որ այսօր եկեղեցին չկայ:

Չանգակատան մուտքին մօտ հայկական արձանագրութիւններ կան, նշուած է, որ «Աբ. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին կառուցուած է Շուշի քաղաքի պարոն Յովհաննէս եւ Բաբա Ստեփանեան Հովնանեցի կողմէ՝ ի յիշատակ իրենց հանգուցեալ եղբօր՝ Մկրտիչի, 1847 թուականին»:

Փորձագէտները բազմիցս ասագանգած են Ատրպէյճանի կողմէ Արցախի մէջ հայկական հետքը վերացնելու մասին: Լեւոնային Ղարաբաղի մէջ եկեղեցիներուն վրայն նաեւ խաչերը կը հեռացուին, պատմական կոթողներ կը վերացուին:

Տարբեր հաշուարկներով՝ Ատրպէյճանի վերահսկողութեան տակ է 4000- 6000 յուշարձան, այդ շարքին՝ եկեղեցիներ, խաչքարեր, ամրոցներ:



### Կարո Փայլանը՝ Հիւր Արեւմտեան Թեմի Առաջնորդարանում



Ապրիլի 21-ին Արեւմտեան Թեմի Առաջնորդանիստ Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի Ս. Պատարագին հիւրաբար ներկայ էր Թուրքիայի Հանրապետութեան խորհրդարանի նախկին պատգամաւոր Կարո Փայլանը: Յընթացքում Ս. պատարագի յարգելի հիւրին բարի գալուստի խօսքեր լոյս տեսնեցին Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը, ի մասնաւորի նշելով Տիար Փայլանի երկարամեայ ջանքերը Թուրքիայում Հայոց ցեղասպանութեան ճանչման ատաքելութեան, հայ-թուրքական հարաբերութիւնների կարգաւորման, հայոց հարցի արդարացի լուծման ուղղութեամբ: Սրբազան հօր խօսքը արժանացաւ ներկայ հաւատացեալների բուռն ծափողջոյններին:

Ս. Պատարագի ավարտից յետոյ Կարո Փայլանը հոգեւոր հայրերի ուղեկցութեամբ, ժողովուրդի միջով Մայր տաճարից ուղեկցուեց Առաջնորդարան, եւ այդ ընթացքում եկեղեցու յարակից հրապարակում ջերմ գրոյցներ եւ մտքերի փոխանակութիւններ ունեցաւ ներկայ հայորդիների հետ, արժանացաւ բարեմաղթանքների, շատերը նկարահանուեցին իր հետ:

Այնուհետեւ Կարո Փայլանը Արեւմտեան Թեմի Առաջնորդարանում առանձին հանդիպում ունեցաւ Առաջնորդ Սրբազանի՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հետ, զրոյցի ընթացքում շոշափուեցին հայապահպանութեան հետ առընչուող տարբեր թեմաներ: Տիար Փայլանը մասնակցեց նաեւ Առաջնորդարանում կազմակերպուած հանդիսութեանը:

Կարո Փայլանի այցելութեան կապակցութեամբ հարկ ենք համարում նշել, որ մամուլում ի յայտ եկած որոշ խեղաթիւրումներ տեղին չեն եւ չեն համապատասխանում իրականութեանը:

Դիւան Առաջնորդարանի  
22 Ապրիլի, 2024

### Հայութիւնը Կը Ոգեկոչէ Հայոց Յեղասպանութեան 109 Ամեակը

Շարունակուած էջ 1-էն

կառուցուածքը ամբողջ աշխարհի, այդ շարքին նաեւ մեր երկրին մէջ: Եւ անոնք պատմեցին իրենց պատմութիւնները՝ վստահ ըլլալու, որ 109 տարի առաջ այս օրը սկսած զանգուածային կոտորածները այլեւս երբեք պիտի չկրկնուին:

«Սա կը մնայ մեր հանդիսաւոր ուխտը: Այսօր եւ ամէն օր Միացեալ Նահանգները պիտի շարունակէ պաշտպանել մարդու իրաւունքները եւ հանդէս գալ ընդդէմ անհանդուրժողականութեան: Մենք ատելութեան ու սարսափին պիտի շարունակենք պատասխանել յոյսով եւ ապաքինմամբ: Եւ մենք պիտի շարունակենք կանգնիլ բոլոր անոնց կողքին, որոնք կը փնտռեն ապագայ, ուր բոլորը կրնան ապրիլ արժանապատուութեամբ, անվտանգ եւ յարգանքով»:

Եկէք Վառ Պահենք Ձարդերու, Տեղահանութիւններու Եւ Հալածանքներու Յիշատակը Սաքրոնի Գրառումը

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն գրառում կատարած է Հայոց Յեղասպանութեան 109-րդ տարելիցին առթիւ:

«Ֆրանսան այսօր կը յիշատակէ 1915 թուականի Հայոց Յեղասպանութեան 109-րդ տարելիցը:

Եկէք վառ պահենք ջարդերու, տեղահանութիւններու եւ հալածանքներու զոհերուն յիշատակը: Չմոռնանք: Ֆրանսացիներն ու հայերը յաւերժ կապուած են», - X-ի իր էջով գրած է Մաքրոնը:

### Պաշտօնական Թուրքիոյ մերժումը

Թուրքիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը հանդէս եկաւ յայտարարութեամբ, մերժելով «1915 թուականի իրադարձութիւններու մասին միակողմանի յայտարարութիւնները», որոնք, իր ձեւակերպմամբ, կը կատարուին «որոշ արմատական շրջանակները բաւարարելու համար»:

Ըստ Թուրքիոյ Արտաքին գործերու նախարարութեան՝ «պատմական փաստերը խեղաթիւրող այս յայտարարութիւնները կը հակասեն միջազգային իրաւունքին», կը խաթարեն երկու համայնքներուն միջեւ հաշտեցման ջանքերը եւ կը խրախուսեն արմատական խումբերը ատելութեան հիմքով յանցագործութիւններ կատարելու:

### RED Շարժապատկերի Ցուցադրութիւնը

Շարունակուած էջ 1-էն

լուծեան փոխան, դիտելու զոհերէն Նագարէթ եւ իր թուրք Տէր Դաւիթեաններու յիշատակին նուիրուած տեսանկյունը:

Այնուհետեւ ներկայները մեծ հետաքրքրութեամբ դիտեցին RED պատմա-վաւերագրական ժապաւէնը, որուն նիւթն առնուած է Գատիր Ազինի հեղինակած «Հայ ցեղափոխական Փարամազը եւ հայ սոցիալիստներն ու ցեղասպանութիւնը Ապտիլ Համիտէն մինչեւ Իթիհատ Թե-

ըլլալով ենթարկուած է սուլ-թաններու վայրագ հալածանքներուն: Այս բոլորին մէջ, կեղեքող փոքրամասնութիւններու մօտ, լուսաատու փարոս մը եղած է մեծն Փարամազ, իր քաջարի ընկերներով, որոնք իրենց հերոսական սիրազոր-ծութիւններով նոր էջ մը պիտի բանային Թուրքիոյ պատմութեան մէջ:

RED-ի մէջ ակնատեսի վկայութիւններով ելոյթներ ունեցան տարբեր մակարդակի մարդիկ, ինչպէս նաեւ քաղա-



րաքի» գիրքէն:

Արդարեւ, վաւերական հարուստ տուեալներով օժտուած Գատիր Ազինի սոցն ժապաւէնը՝ յստակօրէն կը լուսաբանէ Թուրքիոյ փոքրամասնութիւններու կրած տառապանքներն ու անոնցմէ ազատագրուելու համար ստեղծուած ազատագրական շարժումը որոնցմէ է Հնչակեան Կուսակցութիւնը, որուն գաղափարախօսութիւնը լայն ժողովրդականութիւն գտած

քական մեկնաբաններ ու պատմաբաններ:

Աւարտին բուռն ծափահարութիւններով բեմ բարձրացան Ֆիլմի բեմադրիչ եւ արտադրիչ Գատիր Ազին եւ Թուրքիոյ խորհրդարանի նախկին հայ անդամ Կարօ Փայլան: Անոնք շնորհակալութիւններ յայտնելով հանդերձ շեշտեցին իրենց անվերապահ զօրակցութիւնը հայ ժողովուրդի արդար դատին:

HOMENEN LADIES AUXILIARY

Mother's day

Mother's Day Celebration

SATURDAY MAY 11, 2024

11 AM

LUNCHEON

DJ, SURPRISES, GAMES

"I can imagine no heroism greater than motherhood."

PHOENICIA RESTAURANT  
343 N. CENTRAL AVE.  
GLENDALE, CA. 91203

Donation \$100

Lena 626-485-6434  
Karine 818-324-0574



# Massis Weekly

Volume 44, No. 16

Saturday, April 27, 2024

## Armenia Commemorates 109th Anniversary of the Genocide



YEREVAN -- Tens of thousands of people marched to the Tsitsernakabert memorial in Yerevan to commemorate the victims of the Armenian Genocide perpetrated by Turkey 109 years ago.

The daylong procession followed an official wreath-laying ceremony at the hilltop memorial led by President Vahagn Khachaturyan and Prime Minister Nikol Pashinyan, accompanied by Speaker of Parliament Alen Simonyan and other government officials, they visited the Tsitsernakabert

Memorial on April 24 to pay tribute to the memory of the victims of the Armenian Genocide. The President, Prime Minister and other officials laid flowers at the Eternal Flame.

Prime minister Pashinyan issued the following statement on the occasion:

Today we commemorate the memory of 1.5 million victims of the Armenian Genocide, the Meds Yeghern, who were put to the sword in the Otto-

Continued on page 4

## US Premiere of Documentary Film “RED” Hosted in Pasadena



PASADENA — On Friday, April 18, 2024, Massis Publishing hosted the US premiere of the documentary film “RED” at the AGBU Vatche & Tamar Manoukian Performing Arts Center in Pasadena.

“RED” is based on the groundbreaking book “Armenian Revolutionary Paramaz – Armenian Socialists and Genocide from Abdulhamid to Ittihat Terakki,” authored by Kadir Akin. The film delves into profound themes of justice and loyalty, exploring the intricate history and struggles of Armenian revolutionaries amidst the backdrop of the Armenian Genocide.

Prior to the premiere, Mr. Krikor Moloyan welcomed the audience on behalf of Massis Publishing. In a touching gesture, he presented the premiere of a song about Malatia Armenians Nazaret and Khatoun Der-Tavitian, composed and sung by their grandson, Harut Der-Tavitian. Moloyan encouraged the audience to remember their own ancestors, honor their resilience, and reflect upon their own perseverance.

Following the musical tribute, the documentary examined Paramaz’s


Continued on page 4

## US President Joe Biden Remembers Armenian Genocide Victims Honors the Resilience of Armenian People

WASHINGTON, DC -- Today, we pause to remember the lives lost during the Meds Yeghern—the Armenian genocide—and renew our pledge to never forget, US President Joe Biden said in a statement on Armenian Remembrance Day.

“The campaign of cruelty began on April 24, 1915, when Ottoman authorities arrested Armenian intellectuals and community leaders in Constantinople. In the days, months, and years that followed, one and a half million Armenians were deported, massacred, or marched to their deaths—leaving families forever broken, and generations forever changed,” Biden said.

“As we mourn this tragedy, we also honor the resilience of the Armenian people. After enduring one of the darkest chapters in human history, survivors began forging a better future for our world. With courage and commitment, they rebuilt their lives. They preserved their culture. They strengthened the fabric of nations around the world—including our own. And they told their stories to ensure that the mass atrocities that began on this day



109 years ago are never again repeated,” the President continued.

“This remains our solemn vow. Today—and every day—the United States will continue to stand up for human rights and speak out against intolerance. We will continue to meet hate and horror with hope and healing. And, we will continue to stand with all those who seek a future where everyone can live with dignity, security, and respect,” Joe Biden stated.

## First Border Pillar Installed on Armenia-Azerbaijan Border Voskepar Church Will Remain in Armenian Territory



YEREVAN — The first border pillar on the border of the Republic of Armenia and the Azerbaijani Republic was installed on April 23, 2024, the Armenian government reported.

“On the basis of geodetic measurements at the border of the Republic of Armenia and the Republic of Azerbaijan, the first border post was installed within the framework of coordinate adjustment works. The work of expert groups of the two countries is continuing,” the government said in a statement issued late in the afternoon.

It also released photographs of

the post apparently placed near Baghanis, one of the four Tavush villages that will be seriously affected by Yerevan’s latest territorial concessions to Baku.

Early in the morning, the Armenian military started demining the area which was due to be placed under Azerbaijani control. Road police closed a nearby section of a highway leading to the three other affected villages as well as Tavush’s capital, Ijevan. The National Security Service essentially acknowledged that this was done to

Continued on page 4



## G7 FMs Call on Armenia and Azerbaijan to Remain Fully Committed to Peace Process



CAPRI — The G7 nations have called on Yerevan and Baku to remain “fully committed” to the peace process as the group’s foreign ministers issued a communique after their meeting in Capri, Italy, on Friday.

In the lengthy statement on various challenges around the world, the top diplomats of Canada, France, Germany, Italy, Japan, the United Kingdom, the United States, as well as the European Union’s high representative for foreign affairs and security policy also addressed the situation in the South Caucasus.

“We urge Armenia and Azerbaijan to remain fully committed to the peace process to achieve a dignified and durable peace based on the principles of non-use of force, respect for sovereignty, the inviolability of borders, and territorial integrity,” the part of the communique concerning the region said.

Recalling the joint statement issued by Armenia and Azerbaijan on December 7, 2023, which also included a prisoner exchange deal, the G7 foreign ministers encouraged the

sides “to uphold that spirit of cooperation in their future interactions,” stressing that “further escalation would be unacceptable.”

They also called on Azerbaijan to “fully comply with its obligations under international humanitarian law” and encouraged “appropriate steps to ensure the safe, dignified, and sustainable return of refugees and displaced persons wishing to come back to their homes.”

According to the statement, the G7 and its members are “ready to facilitate further constructive contacts at all levels, notably within the established negotiating frameworks provided by the EU and the USA, whose enduring efforts we commend.”

“We reiterate the importance of the commitment to the Alma Ata 1991 Declaration through which Armenia and Azerbaijan recognize each other’s territorial integrity and sovereignty. We encourage greater regional cooperation and the re-opening of all borders, including the border between Armenia and Turkey,” it said.

## European Peace Foundation to Provide Non-Lethal Assistance to Armenia

BRUSSELS — A preliminary agreement has been reached in Brussels on providing non-lethal assistance to Armenia from the European Peace Facility (EPF), a diplomatic document that RFE/RL’s Armenian Service has got hold of suggests.

The document shows that the European Union plans to allocate 10 million euros (about \$10.6 million) to Armenia as part of an assistance measure that will have a duration of 30 months from the date of the adoption of the decision.

According to the document, the assistance measure will finance the establishment of a mobile field camp capability for a battalion-size unit, including a medical treatment facility as well as relevant services and facilities.

“The objective of the assistance measure is to contribute to strengthening the Armed Forces of the Republic of Armenia’s capabilities to enhance national security, stability and resilience in the defense sector,” the document reads.

“The assistance measure aims to allow the Armed Forces of the Republic of Armenia to enhance operational effectiveness, accelerate compliance with Union standards and

interoperability, and thereby better protect civilians in crises and emergencies,” it adds.

The EPF was established in 2021 to provide funds for the purchase of non-lethal weapons or capabilities to promote peace, prevent conflict, and strengthen international security around the world.

Armenia submitted an application for funding from the EPF in 2023. During her visit to Armenia last October then French Foreign Minister Catherine Colonna said that she had personally applied to the EU’s high representative for foreign affairs and security policy on this issue.



## Former Member of the Grand National Assembly of Turkey Garo Paylan Visits the Western Diocese



BURBANK — In the Armenian Church calendar, the fourth Sunday following the Feast of the Holy Resurrection is known as Red Sunday. Present at the Divine Liturgy at St. Leon (Ghevontians) Armenian Cathedral on Sunday, April 21, 2024, (Red Sunday), was Garo Paylan, former member of the Grand National Assembly of Turkey.

The presence of the distinguished guest was acknowledged by the Diocesan Primate His Eminence Archbishop Hovnan Derderian, who welcomed Mr. Paylan to the spiritual center of the Western Diocese of the Armenian Church of North America, emphasized his invaluable mission of bravely voicing the issue of the Armenian Genocide in Turkey and advocating the Armenian cause. Archbishop Derderian’s message was received with rousing applause by the congregants.

Following the Divine Liturgy, Mr. Paylan took part in a processional led by the clergy to meet with the faithful in the Cathedral’s Turpanjian Plaza. Mr. Paylan engaged with the faithful while receiving words of gratitude and commendation.

Thereafter, Mr. Paylan held a meeting with the Diocesan Primate during which issues on preserving the Armenian identity in the Diaspora were discussed. Mr. Garo Paylan also attended a reception organized by the Western Diocese prior to his departure.

Unfortunately, some media outlets in the community have published fabricated information pertaining to Mr. Garo Paylan’s visit. Aimed at disrupting the peace in the community, these publications are completely false and deceitful and do not correspond to reality.

Chancellery of the Western Diocese  
April 22, 2024


## No Hidden Agenda at Brussels Meeting, Document Published in Azerbaijani Media is Fake: Armenian Foreign Ministry

YEREVAN — The Brussels process has been completely transparent and will remain so, Spokesperson for the Armenian Ministry of Foreign Affairs Ani Badalyan said in response to media questions.

The comments come in the wake of various conspiratorial media reports about the Armenia-EU-US high-level meeting held in Brussels on April 5. In particular, the Azerbaijani media outlets published a document allegedly agreed upon in Brussels on April 5.

“In fact, the meeting held in Brussels was focused on the resilience of Armenia and the diversification of its economy. There has been a lot of fuss about the topic, which does not correspond to reality. The document published in the Azerbaijani media is fake, such issues were not on the agenda of the Brussels meeting,” the Spokesperson said.

“The complete agenda of the topics discussed in Brussels is set out in the joint press release distributed following the meeting. Any statement made outside the agenda of the press release is false. There was no hidden agenda at the



Brussels meeting,” she said.

Badalyan stressed that the Brussels process has been completely transparent and will remain so.

A document circulated in Azerbaijani media claims that the United States will allegedly provide assistance to develop the military and defense potential of Armenia. It further claims that Russian border guards in Armenia are expected to be replaced, including on the Iranian border, and the EU will help Yerevan in creating defense infrastructure on the border with Azerbaijan.



## Azerbaijanis Completely Destroy “Kanach Zham” Church and Ghazanchetsots Cemetery in Shushi



SHUSHI — Between December 28, 2023 and April 4, 2024, St. John the Baptist church (S. Hovhannes Mkrtyich), a 177 year old landmark in Shushi was destroyed, Azerbaijan’s most egregious violation yet of a December 2021 ICJ order, the Caucasus Heritage Watch reports.

Built by Armenians in 1847, the church, also known as Kanach Zham (Green Chapel), was damaged amidst the 2020 war. In the aftermath of the war, the Baku diocese of the Russian Orthodox Church laid claim to the building and pledged restoration. Nevertheless, the church is now gone.

At the entrance to the belfry, building inscriptions in Armenian read: “St. Hovhannes Mkrtyich Church was built by Shusha townsman baron Hovhannes and

Baba Stepanyan Hovnanents in memory of their deceased brother Mkrtyich in the year of 1847.”

Ghazanchetsots Cemetery  
Satellite imagery dated April 4 shows that the destruction of the Ghazanchetsots cemetery in Shushi is complete, the Caucasus Heritage Watch reports.

This marks the first destruction of a cemetery since the International Court of Justice ordered Azerbaijan to prevent and punish attacks on Armenian cultural heritage.

Damage to the cemetery began in October, as CHW reported in an alert on Nov 27. At that point, it was not too late to stop the destruction. But by December 2023 it was almost gone.

## The Threat of Genocide is Still Present in the World – MFA of Armenia


The threat of genocide is still present in the world, and the 21st century has witnessed new manifestations and consequences of the policy of ethnic cleansing, Ministry of Foreign Affairs of Armenia said in a statement on the 109th anniversary of the Armenian Genocide.

“On April 24, we commemorate and bow

to the memory of the martyrs of the Armenian Genocide committed in the Ottoman Empire at the beginning of the 20th century.

“Starting from 1915, as a result of the crimes against humanity committed by the government of the Young Turks around 1.5 million Armenians, including children, women and the elderly, were killed solely on the basis of their nationality, for being Armenian. Millions of Armenians were deprived of their property as well as historical, cultural and spiritual heritage.


“This crime committed against the Armenians later became the basis for the definition of the international convention “On the Prevention and Punishment of the Crime of Genocide”. Unfortunately, despite the consequent efforts, the threat of genocide is still present in the world.



“Already in the 21st century, in 2020-2023, we faced new manifestations and consequences of the policy of ethnic cleansing. More than 150,000 Armenians were forcibly displaced and forced to leave their historical homeland because of war, xenophobia, crimes based on identity, siege and consistent acts of intimidation against the population.

“Taking into account the risks of genocide and cases the modern world witnessed, and many other examples of gross violations of human rights and international humanitarian law, Armenia continues its active involvement in international platforms in order to coordinate efforts in the fight against the crime of genocide, to prevent new genocides and crimes against humanity, and to protect the rights of victims,” the statement reads.

## Hakan Seckinelgin’s New Book The Armenian Genocide and Turkey: Public Memory and Institutionalized Denial Published



LONDON/NEW YORK—I. B.Tauris, an imprint of Bloomsbury Publishing, has announced the publication of Dr. Hakan Seckinelgin’s book *The Armenian Genocide and Turkey: Public Memory and Institutionalized Denial*. The book is part of the series, edited by Bedross Der Matossian (University of Nebraska, Lincoln) and published by I.B. Tauris, an imprint of Bloomsbury Publishing UK.

In this book, Hakan Seckinelgin investigates the mechanisms by which denial of the events of 1915 are reproduced in official discourse and the effect this has on Turkish citizens. Examining state education, media discourse, academic publications, as well as public events debating the Armenian genocide, the book argues that, at the public level, there exists a ‘grammar’ or ‘repertoire’ of denial in Turkey that regulates how the issue can be publicly conceptualized and understood. The book’s careful analysis examines the way that knowledge about the genocide is censored in Turkey, from the language that must be used to publicly discuss it to the complex way in which selective knowledge and erased history are reproduced from 1915 and subsequent generations until today. It argues that denialism has become essential to a certain kind of Turkish national identity and belonging – and suggests ways in which this relationship can be unpicked in the future.

Seckinelgin commented on the book, saying: “This research project stems from a paradoxical realization: while many in Turkish public feel comfortable in denying the 1915 Armenian genocide, there is a significant lack of knowledge about Armenian lives before (or immediately after) 1915 in Turkey. I realized that there is a kind of intergenerational knowledge claim based on national citizenship at work here. People in the Turkish public deny the 1915 genocide as members of a community that has constructed and imagined an appropriate past for itself. This revealed a process of intergenerational knowledge claims through which genocide is denied. I here focused on the nature of the denialist knowledge claims that appear in public discussions. Thus, the book has a distinctive entry point to its analyses; rather than focusing on the historical discussion, it begins from the present to unpack the conditions of denial. In this way, I explore condi-

tions for reproducing the present institutionalized denialism.” Seckinelgin also focuses on several mechanisms that make such a reproduction possible. In particular, the process is not only about controlling available public knowledge of the past, but it also aims to control how far the public should have empathy towards those who are constructed as enemies, that is, those who make ‘us’ insecure in different ways. He continued, “In the analysis, I find that the language of ahistorical insecurity, to a categorical other, is used as a master narrative that stops the possibility of thinking about living with others and prevents thinking about conditions of cohabitation without silencing. The wider aim is to reveal mechanisms that maintain a public denial of the Armenian genocide in Turkey, to open a possibility of thinking differently from what is currently taken as public knowledge.”

“This is an excellent book that demonstrates the extent to which the denial of the Armenian genocide is embedded within Turkish identity,” said Der Matossian, the editor of the series. “Seckinelgin demonstrates the multifaceted mechanisms employed by the Turkish state in denying the Armenian Genocide as an official policy. His theoretical approach and analytical skills demonstrate a sophisticated web of denial implemented by an unrepentant state,” he concluded.

Hakan Seckinelgin is an Associate Professor/Reader in International Social Policy at the Department of Social Policy, LSE. He is trained as an international political theorist. His work focuses on the epistemology and politics of international social policy by engaging with people’s lives in different contexts. He is particularly interested in understanding how we think about policy processes by first thinking about the problems experienced in the everyday lives of those who are supposed to benefit from the policies targeting them. He published widely, including several books on international policy and HIV/AIDS, including *The Politics of Global AIDS: Institutionalization of Solidarity, Exclusion of Context* (Springer 2017). He was the editor-in-Chief of the *Journal of Civil Society*.

Copies of *The Armenian Genocide and Turkey: Public Memory and Institutionalized Denial* are available for purchase from the Bloomsbury Press website.



## Armenia Commemorates 109th Anniversary of the Genocide

Continued from page 1

man Empire since 1915 for being Armenians.

This large-scale tragedy took place during the years of the World War I, and the Armenian people, who had no statehood, had lost their statehood centuries ago, and essentially had forgotten the tradition of statehood, became victims of geopolitical intrigues and false promises, lacking first of all a political mind capable of making the world and its rules understandable.

Meds Yeghern became a nationwide tragedy and grief for us, and without exaggeration, is a predetermining factor for our socio-psychology. Even today, we perceive the world, our environment, ourselves under the dominant influence of the mental trauma of the Meds Yeghern, and we have not overcome that trauma.

This means that, being an internationally recognized state, we often relate and compete with other countries and the international community in a state of mental trauma, and for this reason, sometimes we cannot correctly distinguish the realities and factors, historical processes and projected horizons.

Maybe this is also the reason why we get new shocks, reliving the trauma of the Armenian Genocide as a legacy and as a tradition.

In this sense, I consider the internal Armenisation of the Meds Yeghern extremely important. When talking about the Armenian Genocide, the Meds Yeghern, we always cite the outside world, talk to the outside world, but our internal conversation never takes place on this topic.

What should we do and what

should we not do in order to overcome the trauma of genocide and exclude it as a threat? These are questions that should be the key subject of discussion in our political and philosophical thinking, but this kind of point of view of dealing with the fact of the Meds Yeghern is not common among us.

This is an imperative, an urgent imperative, and we must evaluate the relations between the Meds Yeghern and the First Republic of Armenia, we must relate the perception of the Meds Yeghern with the vital interests of the Republic of Armenia, our national statehood.

Meds Yeghern, deprivation of homeland is not a verdict for us, which we have to bear as a continuous search for a lost homeland. We must stop the searches of a homeland, because we have found that homeland, our Promised Land, where milk and honey flow. For us, the commemoration of the martyrs of the Meds Yeghern should not symbolize the lost homeland, but the found and real homeland, in the person of the Republic of Armenia, whose competitive, legitimate, thoughtful and creative policies can exclude a repetition.

Never again. We should not say this to others, but to ourselves. And this is not an accusation against us at all, but a point of view where we, only we, are responsible and the director of our destiny and we are obliged to have enough mind, will, depth and knowledge to carry that responsibility in the domain of our sovereign decisions and perceptions.

May the martyrs of Meds Yeghern and all our other martyrs be consoled in their permanent sleep by the Republic of Armenia.

And long live the Republic of Armenia.

## US Premiere of Documentary Film “RED”

Continued from page 1

statements, ideology, and activism, along with the Armenian Question in the Ottoman Empire and the subsequent Armenian Genocide, captivating the audience with its depth and relevance.

The screening was followed by remarks from the director, Kadir Akin, who expressed gratitude for being invited to the premiere. He highlighted the lack of awareness among Turkish intellectuals and the Armenian community in Turkey about this history as the primary motivation for writing “Armenian Revolutionary Paramaz” and directing the documentary RED.

Akin was particularly moved by Paramaz’s internationalist political stance during his defense at the Van Court in 1897. Paramaz emphasized the goal of living on equal terms with various ethnic groups and rejecting nationalism in favor of friendship with all peoples. He advocated for self-determination for all inhabitants of Armenia, emphasizing the importance of their own will and vote.

Akin acknowledged the challenges of prevailing prejudices in Turkey and aimed to broaden acceptance

of Armenian history, including the genocide. He credited figures like Taner Akçam for their efforts in this regard.

Additionally, Akin recognized Garo Paylan’s advocacy for minority rights in Turkey and announced plans for a new documentary comparing historical Armenian deputies such as Hampartsoum Boyadjian with Paylan’s contemporary efforts.

In his closing remarks, Akin expressed hope for fostering friendship and understanding between peoples, citing examples of warmth he has experienced between communities in various places like Yerevan, Beirut, and Istanbul.

Former Turkish Parliamentarian, Mr. Garo Paylan, a founding member of the People’s Democratic Party (HDP) and a leading democracy activist in Turkey, emphasized the documentary’s importance in breaking down stereotypes entrenched in the Turkish public.

At the conclusion of the program, the audience engaged in a lively Q&A session with Mr. Akin and Mr. Paylan, further deepening their understanding of the issues presented in the film and the realities that Armenians and Armenia face today.

## “Before, After: Reflections on the Armenian Genocide” Now Open Through July 7



GLENDALE — Presented by Glendale Library, Arts & Culture and ReflectSpace Gallery, Before, After: Reflections on the Armenian Genocide is now on view through July 7, 2024 at the ReflectSpace Gallery, inside Glendale Central Library.

Before, After: Reflections on the Armenian Genocide traces generations of Armenian resiliency through the common thread of loss and survival. The exhibition examines the connections passed down through blood, migration and history; from genocide to diaspora to belonging. The exhibition integrates artifacts with abstraction, witness accounts with recreation, old materials repurposed, and new molds made. The Armenian experience (both past and present, before and after) is

showcased through a range of mediums and practices, reflecting the repeating patterns of grief, healing and reflection.

Before, After: Reflections on the Armenian Genocide includes artworks by nine artists: John Avakian, Anush Babajanyan, Silvina Der-Meguerditchian, Diana Markosian, Jacqueline Kazarian, Talin Megherian, Marsha Nouritza Odabashian, Jessica Sperandio, and Scout Tufankjian.

For more information, please see the full press release below my signature. For high-res images, click here. Let me know if you have any questions and thank you for your consideration for any upcoming activity roundups or art features.

## First Border Pillar Installed



Continued from page 1

prevent locals from trying to disrupt the mine clearance.

On April 19 Armenia’s Foreign Ministry said in a statement that the preliminary agreement was reached with Azerbaijan to start border delimitation process in separate sections of the borderline immediately between the several settlements in order to bring them into compliance with the legally justified interrepublican border that existed within the Soviet Union at the moment of its dissolution.

The parties have agreed that the process of delimitation will be based on the Alma-Ata Declaration of 1991. The parties have also arranged to stipulate this fundamental principle in the draft Regulation (in the future, in case the Agreement on establishment of peace and interstate relations between the Republic of Armenia and the Republic of Azerbaijan provides other-

wise, the relevant clause of the Regulation will be brought into compliance with the principles as prescribed by this Agreement).

### Voskebar Church

Deputy Prime Minister of Armenia and the Chairman of the Commission on Border Delimitation with Azerbaijan Mher Grigoryan has refuted the rumors that 6th-7th century Church of the Holy Mother of God, located in the village of Voskepar, Tavush province, will be handed over to Azerbaijan.

“After the implementation of the agreement between Armenia and Azerbaijan on border delimitation, the church will remain in the territory of Armenia,” Grigoryan’s office told Armenpress.

On April 22, demining works were underway and after completion the local residents were given access to the church.



# Այնթապի Հերոսամարտի 104-րդ Տարեդարձի Տօնակատարութիւնը

«Խօսքէն Անցնինք Գործի՝ Լսեցնենք Երիտասարդութեան Ձայնը»  
Դոկտոր, Պրոֆեսոր Սիլվա Գարայեան



## ԿԱՐԻՆԵ ՏԵՐ ԳԵՈՐԳԵԱՆ

Տեղի էր ունենում հայկական աւանդական միութենական ձեռնարկ: Այնթապցիների Մշակութային միութիւնը Լոս Անջելեսում, արդէն 35-րդ անգամ, հանրային ձեռնով յիշատակում էր Այնթապի հերոսամարտը՝ չմարող խանդավառութեամբ եւ մեծ հպարտութեամբ (Կիրակի, 14 Ապրիլ 2024, Հայ Աւետարանական Մերտինեան վարժարանի սրահ): Միութեան երկարամեայ ատենապետ, հանգուցեալ Աւետիս Տեմիրճեանին փոխարինելու էր եկել Սարգիս Քիլճեանը, որ նոր թափ էր հաղորդել վարչութեան աշխատանքներին: Հայրենակցական միութիւնների շարքում, եթէ դեռեւս գոյութիւն ունեն, նշանակալից է Այնթապի մշակութային միութեան հիմնաւորումը եւ շարունակական գործունէութիւնը Լոս Անջելեսի հայահոծ գաղութում:

Ողջունի խօսքը տրուած էր ատենապետ Սարգիս Քիլճեանին, որ Այնթապի հերոսամարտի ոգեկոչումը կապելով Ապրիլ ամսուայ հայկական միւս ձեռնարկների հետ, շնորհակալութիւն էր ցայտում այս հանդիսութեան հետ առնչուած բոլոր անձանց: Հաճելի է հնչում երեց այնթապցիների շրթներից «Այնթապ» բառի այնթապցիական արտասանութիւնը:



Ղեկնող քնն. Քիրազեանը ներկայանում էր սրտի խօսքով՝ այնթապցիների հերոսամարտը համարելով վասն ազատութեան եւ արժանապատուութեան տարուած պայքար: Նրա աղօթքը հնչեց խմբային, քանի որ սրահում գտնուում էր այդ աղօթքով մեծացածների սերունդը: Չնայած ծրագրում տպագրուած բաւական թուով անձերի մասնակցութեանը, հանդիսութիւնը ներկաների համար չզարձաւ ան-

համբերութեամբ աւարտին սպասուող մի ձեռնարկ, այլ եղաւ անընդմէջ նորութիւնների մի շղթայ, ուր իրար էին յաջորդում տարեցն ու երիտասարդը, փորձառուն եւ նորելուկը, հինն ու նորը: Հմուտ հանդիսավարուհի Թագուհի Արզումանեանը առաջնորդում էր ձեռնարկի ընթացքը իր բացատրութիւններով, ներկայացումներով, ասմունքի համարներով եւ գեղեցիկ փոխանցումներով կապում էր այս բազմազանութիւնը: Այժմ գանք ծրագրի հիմնական կէտին. ի՞նչն էր, որ թարմութիւն էր բերել մեր հայկական հաւաքական հանդէսին, երբ արդէն



համարեայ անգիր դարձած նախադասութիւնները, նիւթերն ընկալուեցին նորովի, եւ հանդիսատեսը ստացաւ բոլորովին տարբեր պատգամ, ինչպէս նաեւ այդ պատգամի իրականացման յստակ ճանապարհը: Ահա այս էր, որ երեւան էր բերել հանդիսութեան գլխաւոր բանախօս, դոկտոր Սիլվա Ս. Գարայեանը: Ընդհանրապէս, հիմնական պատգամաբերի պարագայում, անմիջապէս ուզում ես կուսհել նրա ելուցթի տեւողութիւնը, քանի որ ժամանակը մեզ համար դարձել է արագ սպառուող եւ չբաւարարող մի խնդիր:

Համբերութեամբ գինուած սկսեցինք լսել բանախօսին՝ Պապայեան ընտանիքի դուստր եւ Գարայեան ընտանիքի այնթապցի արժանաւոր հարս Սիլվային: Նա հիմնական կէտերով նշում էր օրուայ խորհուրդի կարեւորութիւնը, որ մանուկ հասակից արմատացել էր իր մէջ, ընտանեկան յարկի տակ, մեծ հօր՝ տէր Ներսէս աւագ քահանայ Պապայեանի հովանաւոր շուքի ներքոյ, նաեւ՝ հայ լինելու եւ հայ մնալու գաղափարը:

Դոկտոր Գարայեանը ընդգծեց, որ հայը Ամերիկայում գոյատեւելու համար հսկայական պայքար ունի մղելու: Ինքը հպարտ է մեր նոր սերնդի ներկայացուցիչներով, որոնք մեծ յաջողութիւններ են արձանագրել իրենց մասնագիտական ասպարէզներում, սակայն մենք պէտք ունենք հայ ամերիկացիների: Սիլվան կարեւորեց հայրենակցական միութիւններին, որոնք կարող են հանդիպումներ կազմակերպել մեր երիտասարդներին համախմբելու նպատակով, նաեւ բաժնեկցելու մեր մեծերի պատգամները, աւանդույթներն ու սովորույթները:

Սիլվան միեւնոյն ժամանակ ողջունեց Այնթապի հայրենակցական միութեանը, ժրջան ատենապետին եւ գործակիցներին: Իսկ օրուայ հանդիսութիւնը ներկայացրեց որպէս միասնական ոգիով եւ հաւաքական կամքով վերանորոգուող ուխտ՝ մեր ազգային արժէքները պահպանելու եւ փոխանցելու առաքելութեան ճանապարհին:

Եւ ձեռնարկին: Կտրուկ եւ սթափեցնող կոչը եկաւ յիշեցնելու այնթապցի 4-րդ սերնդի գոյութիւնը, որ շարքի կանգնած սպասում է իր ներդրումն ունենալու ազգային կեանքում: Կարծես դեռ ուզում էինք, որ բանախօսը շարունակի խօսել, մանրամասնել նիւթը, բայց՝ ի գուր, նա արդէն փոխանցել էր իր հերթը:

Յստակ եւ մաքուր հայոց լեզուով մեզ էին ներկայանում օրուայ 4 պատգամաբերները, որոնք հիմնականում բարձրագոյն կրթութիւն ստացած եւ իրենց մասնագիտութիւններով աշխատող երիտասարդներ էին:

Փաստաբանուհի Ալին Խանձեանը՝ թոռնիկը այնթապցիների միութեան հիմնադիր անդամ Սիրվադ Ապաճեանի, պատմում էր իր կեանքը, կարեւորում էր երիտասարդներին քաջալերելու եւ գեղեցիկ օրինակ էր բերում. «Թրթուրը կը ճգմենք եւ կ'ըսենք ինչո՞ւ թիթեւնիկ չկայ»: Ոգեւորուած էր իր մասնակցութեամբ:



Եւ յանկարծ, Սիլվան յայտարարելով՝ «Խօսքէն Անցնինք Գործի՝ Լսեցնենք Երիտասարդութեան Ձայնը», աւարտեց իր ելուցթը եւ ներկայացրեց այն չորս երիտասարդներին, ովքեր եկել էին մասնակցելու եւ խօսք ունենալու տու-

Ալեքս Պապայեանը՝ թոռնիկը այնթապցիների նահապետ Երուանդ Պապայեանի, նշում էր ընտանեկան դաստիարակութեան կարեւորութիւնը, օրինակ բերելով իր հայցի

Շար.ը էջ 14

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**AEBU SCHOLARSHIP PROGRAM**

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

**APPLICATIONS NOW OPEN**  
Through June 30, 2024

To apply, visit our website  
**WWW.AEBU.ORG**

Contact Us  
626•344•7321

AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE  
1060 North Allen Avenue, Pasadena, CA 91104



### Հալեպի Կիլիկեան Ծեմարանի Շինարարական Աշխատանքներու Հիմնաքարի Բացումը



Հալեպահայությունից համար ընդհանրապես եւ Կիլիկեան ձեմարանի մեծ ընտանիքին համար մասնաւորապէս պատմական օր մըն էր Երկուշաբթի, 15 Ապրիլ 2024-ը, հովանաւորութեամբ Դամասկոսի Հայոցի Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Արմաշ Ս. Եպս Նալպանտեանին, եւ աջակցութեամբ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Մերձաւոր Արեւելքի գրասենեակին եւ Հոլանտիոյ Միացիալ Եկեղեցիներու Կազմակերպութեամբ, ի ներկայութեամբ Դամասկոսի Ազգային Իշխանութեան ներկայացուցիչներուն, Սուրիոյ խորհրդարանի անդամ Դոկտ. Լիւսի Իսկէնեանի, Ս.Դ.Հ.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ ընկ. Տոքթ. Վազգէն Համալեանի, Ս.Դ.Հ.Կ.-ի Հարաւային Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ ընկ. Խորէն Զարրքեանի, Ս.Դ.Հ.Կ.-ի Հիւսիսային Շրջանի Վարիչ Մարմինի ատենապետ ընկ. Աւօ Խո-

զան Արմաշ եպիսկոպոս արժանացաւ պատուոյ ընդունելութեան եւ իր ձեռամբ կատարուեցաւ Կիլիկեանի շինարարական աշխատանքներու հիմնաքարի բացումը:

Արդարեւ, Կիլիկեան ձեմարանի տնօրէնուհի տիկին Արփի Շէօնմէլեան խօսք առնելով բարի գալուստ մաղթեց պատուական հիւրերուն:

Ան իր ելոյթին մէջ ըսաւ. «Այսօր Կիլիկեան ձեմարանը ցնծութենէն կը դղրդայ եւ իր հնամեայ քարերը կեանքով կը ներշնչուին, հարիւրերեք ամեայ կրթական այս կառուցին առաքելութեան ճամբով անգամ մը եւս պարծանք կը շողշողայ, փաստելով արար աշխարհին, որ Հալեպի Կիլիկեան ձեմարանը կը մնայ եւ պիտի մնայ անառիկ ամրոց ազգապահպանումի հալեպահայութեան, փիւնիկի նման աւերակներու մէջէն վերակենդանացող, որովհետեւ ան ունի



շաֆեանի եւ անդամներուն, Հ.Մ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներուն, հին Հալեպի քաղաքապետարանի տնօրէն երկրաչափ Ահմատ Շահապի, Հալեպի հնութիւններու փոխ-տնօրէն Տիկին Ռաշա Մասրի, Հալեպի կրթութեան նախարարութեան ներկայացուցիչին, բարեսիրական մարզական հայրենակցական միութիւններու ներկայացուցիչներուն, սուրիական լրատուական եւ արբանեակային կայաններուն, Կիլիկեան ձեմարանի աշակերտութեան եւ ծնողներու, մասնակցութեամբ Հ.Մ.Մ.-ի Սկստական շարքի փողերախումբին եւ ազգային հայրենասիրական կշռոյթին ներքոյ, Դամասկոսի բարեխնամ առաջնորդ՝ Կիլիկեանցի Սրբա-

հաւատարիմ զաւակներ, որոնք Կիլիկեանի երդիքներուն ներքեւ ջամբած են ուսում եւ թրծուած են հաւատարմութեամբ ու հայրենասիրութեամբ:

Տնօրէնուհին իր երախտագիտութիւնը յայտնեց բարերարներուն եւ բոլոր անոնց, որոնք իրենց կարելին ըրին այս աշխատանքներուն յաջողութեան համար եւ այս մէկը պիտի դրոշմուի գերաշնորհ Արմաշ Սրբազան Հօր կողմէ, որով երախտագէտ է Կիլիկեան ձեմարանին, որ ուսանած է այս յարկին տակ, եւ այսօր Արմաշ Սրբազանը կը դնէ հիմնաքարը նախակրթարանի բաժինին վերանորոգման աշխատանքներուն, ամրապնդելու Կիլիկեանի սրբազան առաքելու-

### Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի Հովուական Այցը Լիզպոն



Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան Ապրիլի 13-էն 15 Լիզպոն կատարած իր հովուական այցի ընթացքին, շաբաթօր այցելեց Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի հայկական բաժինը, ուր տնօրէն՝ Ռազմիկ Փանոսեանի հետ քննարկեց յետագայ համագործակցութեան ծրագրերը:

Յաջորդ օրը, Կիրակի յետմիջօրէին, Խաժակ Սրբազանի ձեռամբ եւ Հոգւոյ Տէր Շնորհք աբեղայ Սարգսեանի առընթերականութեամբ Լիզպոնի Igreja de Nossa Senhora do Rosario de Fntima եկեղեցոյ մէջ մատուցուեցաւ Փորթուկալահայ համայնքի վերջին տարիներու պատմութեան մէջ Զատիկան անդրանիկ Ս. Պատարագը, զոր կազմակերպած էր Փորթուկալիա-Հայաստան Բարեկամութեան միութիւնը: Պատարագին մասնակցեցան աւելի քան 50 հայ հաւատաւորներ՝ Լիզպոնէն, մօտակայ շրջաններէն եւ մինչեւ իսկ Պորտո քաղաքէն:

Այդ ուրախ առիթով, ներկաներու մեծ մասը նոյն երեկոյ Ararat հայկական ռեստորանին մէջ հաւաքուեցաւ ընթրելու սիրոյ սեղանին շուրջ, որուն ուղեկցեցան սրտագին կենացներով եւ հայկական երգով:

Միասնօրէն ակնկալուեցաւ մօտակայքը ստեղծել ժամանակաւոր եկեղեցական խորհուրդ, որուն առաջնային նպատակը պէտք է ըլլար քարտէզագրել եւ կապ հաստատել Փորթուկալի մայրաքաղաքին եւ շրջակայ վայրերու մէջ բնակող հայութեան հետ՝ ծխական կեանքի եւ Եկեղեցոյ հայապահպան ծրագրերու մէջ ներգրաւելու նպա-

տակով:

Մեկնելէն առաջ, երկուշաբթի առաւօտեան ժամը 10-ին, Խաժակ Արք. Պարսամեան հիւրընկալուեցաւ Լիզպոնի Պատրիարք՝ Արքեպիսկոպոս Բուլ Մանուէլ Սոուզա Վալերիոյի մօտ: Հանդիպման ներկայ եղաւ նաեւ Փորթուկալ-Հայաստան բարեկամութեան միութեան նախագահ Տիար Վահէ Միխիթարեանը:

Սրբազան Հայրը նախ շնորհակալութիւն յայտնեց քաղաքի հոգեւոր առաջնորդին գինք անձնապէս ճանչնալու ընձեռած հնարաւորութեան, ինչպէս նաեւ Սուրբ պատարագի կապակցութեամբ կաթողիկ աղօթաՎայր տրամադրելու համար:

Անդրադառնալով հայագրի բարերար Գալուստ Կիւլպէնկեանի անձին, հիւրընկալ հոգեւորականը բարձր գնահատեց անոր գործունէութիւնը՝ յօգուտ իրեն համար երկրորդ հայրենիք դարձած Փորթուկալիոյ եւ անոր ժողովուրդի բարօրութեան:

Հիւրընկալ հոգեւորականը Խաժակ Սրբազանէն տեղեկացաւ երկրի մէջ բնակող հայութեան մասին եւ հանդիպման ներկայ գտնուող միջեկեղեցական հարցերով իր փոխանորդի հետ, խոստացաւ հայ հաւատաւորներու հոգեւոր կարիքները բաւարարելու համար տրամադրել եկեղեցի մը, ուր կանոնաւոր պատարագներէն բացի հնարաւոր կ'ըլլայ նաեւ ստեղծել կիրակնօրեայ դպրոց:

Բարեկամական ջերմ մթնոլորտի մէջ տեղի ունեցած զրոյցի աւարտին Սրբազան Հայրը Լիզպոնի Պատրիարքին նուիրեց Սուրբ Կոչի Աւետման փայտէ սրբապատկերը:

թիւնը՝ դաստիարակելու մատուցաւ սերունդները հայաշունչ ոգիով:

Ապա արաբերէնով խօսք առաւ պետական տնօրէնը իր երախտագիտութիւնը յայտնելու հայ եւ արաբ ժողովուրդներու բարեկամական կապին եւ ունենալով նոյն պահանջատիրական ոգին:

Եզրափակիչ խօսքը կատարեց Արմաշ Սրբազանը, որ յուզումնախառն սակայն հպարտութեամբ ունեցաւ իր ելոյթը: Ան վերահաստատեց Սփիւռքի մէջ Կիլիկեան ձեմարանի դերը,

որուն մէկ աշակերտը եղած է եւ ապա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ձեմարանն աւարտած է եւ այսօր հոգեւորականի իր ծառայութեամբ իր սիրելի Կիլիկեանին թեւ եւ թիկունք կը հանդիսանայ:

Ան իր խորին շնորհակալութիւնները յայտնեց Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Մերձաւոր արեւելքի գրասենեակի եւ Հոլանտիոյ միացիալ եկեղեցիներու կազմակերպութեան, որոնց աջակցութեամբ կարելի եղաւ իրականացնել այս աշխատանքը:



# Բերդկունքի Ամրոցը Կը Վերականգնուի Եւ Կը Վերածուի Արգելոց-Թանգարանի



## ԽՈՍՐՈՎ ԽԼՂԱԹԵԱՆ

Յուշարձանների եւ տեսարժան վայրերի պահպանութեան միջազգային օրը Գեղարքունիքի մարզի Գաւառ համայնքի Բերդկունք գիւղի տարածքում գտնուող Բերդկունք կամ Սպիտակ բերդ ամրոցի տարածքում նշուեց կարեւորագոյն միջոցառումների շարքով:

«Արմենպրես»-ի տեղեկացմամբ՝ միջոցառումներին մասնակցեցին ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրէասէանը, Եւրոպական միութեան պատուիրակութեան ղեկավար Վասիլիա Մարագոսը, Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Զանիկ Բագէեանը, Գաւառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյեանը, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչութեան պետ Կարէն Զագեանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների պահպանութեան վարչութեան պետ Յարութիւն Վանեանը, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներ, հանրակրթական դպրոցների ուսուցիչներ եւ աշակերտներ, հնագէտներ: ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրէասէանը եւ Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար Վասիլիա Մարագոսը պարգևատրեցին «Եւրոպական ժառանգութեան օրեր» ծրագրի «Եւրոպական ժառանգութեան երիտասարդ կերտողներ» մրցոյթի մասնակիցներին:

«Մրցոյթն ուղղուած է պատմամշակութային ժառանգութեան հանրաճանաչմանը, այն ԿԳՄՍ նախարարութեան համակարգմամբ իրականացրել է Ե. Զարենցի անունով գրականութեան եւ արուեստի թանգարանը: Մրցոյթին իրականացուել է «Եւրոպական ժառանգութեան երիտասարդ կերտողներ» համաեւրոպական հարթակի համատեքստում՝ «Եւրոպական ժառանգութեան օրեր» ծրագրի շրջանակում: Հայաստանը մրցոյթին ներկայացել է 11-17 տարիքային խմբում: Մրցոյթում ներկայացուել է 41 աշխատանք. պատանեկան խմբերն ու անհատները մրցել են ազգային ժառանգութեան մասին իրենց պատկերացումներով՝ ներկայացնելով տեսասահիկներ, կոմիքսներ, անիմացիոն սիւժէներ, նկարչական աշխատանքներ, մինչեւ 5 րոպէ տեւողութեամբ տեսանիւթեր: Ներկայացուած աշխատանքներից 6-ն ընդգրկուել է եզրափակիչ փուլում: Հայաստանից

եւ արտերկրից 21 հայազգի մշակոյթի գործիչներից կազմուած յանձնաժողովի գնահատման արդիւնքում յաղթող է ճանաչուել ՀՀ Կոտայքի մարզի Աբովեան քաղաքը ներկայացնող «ՀԱՅԷԼիցներ» թիւմը՝ «Գեղարգ» տեսանիւթով», ներկայացրեց ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան պատմութեան եւ մշակոյթի յուշարձանների պահպանութեան վարչութեան պետ Յարութիւն Վանեանը:

Պարգևատրման արարողութիւնից յետոյ մրցոյթում աչքի ընկած խմբերը «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն» ՊՈԱԿ-ի կողմից ստացան նաեւ նուէրներ՝ գրքերի տեսքով, որոնք պատմում են Հայաստանի արգելոց-թանգարանների մասին:

«Լիայոյց ենք, որ մի օր էլ գիրք կը հրատարակուի Բերդկունք ամրոցի մասին՝ արդէն արգելոց-թանգարանի վերածուած պատմամշակութային ու զբօսաշրջային նշանակութեան կառուցի կարգավիճակով», նշեց «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն» ՊՈԱԿ տնօրէնի տեղակալ Արտաւազը Զաքեանը:

Օրուայ կարեւորութեան ու միջոցառումների մասին տպաւորութիւններով կիսուեց ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրէասէանը: «Այսօրուայ կազմակերպուած միջոցառումներն հիմնովին ուղղուած են մեր պատմամշակութային արժէքների պահպանման, վերականգման ու հանրաճանաչման քայլերին: Դուք տեսաք, թէ դպրոցական ինչպիսի հրաշալի թիմեր էին մասնակցում ԵՄ ծրագրի կողմից յայտարարուած մրցոյթին՝ մեր պատմամշակութային արժէքների մասին ներկայացնելով կոլաժներ, տեսաֆիլմեր, պատմութեան քննարկներ, բանաստեղծութիւններ: Եւ սա չի կարող չուրախացնել, քանի որ մեր դպրոցականները ներգրաւուած են այնպիսի կարեւոր նշանակութեան ձեռնարկներում, ինչպիսիք են հայ ժողովրդի պատմութեան ու մշակոյթի հակայական ժառանգութեան պահպանմանն ու հանրաճանաչմանն ուղղուած նման քայլերը: Պետութեան վերաբերմունքը յուշարձանների ոլորտին կոնկրետ փաստերով եւ ֆինանսաւսակցական յատկացումներով է աւելում է արտայայտուում. այս տարի յուշարձանների ամրակայման եւ վերականգնման ոլորտին յատկաց-

# Բագրատ Էսդուգեան Եւ Պերճ Արապեան Պարգևատրուած



«Ակոս»ի աշխատակազմէն հայերէն էջերու խմբագրապետ Բագրատ Էսդուգեան եւ յայտնի լուսանկարիչ Պերճ Արապեան արժանացած են Մեթին Կէօքթեփէի անունով լրագրութեան մրցանակին: Մեր աշխատակիցները այս պարգևին արժանացած են Արցախէն բռնի տեղահանուած ժողովուրդի հետ կատարած հարցազրոյցներու յղուածաշարքին պատճառաւ:

Մրցանակատուութիւնը կայացաւ 15 Ապրիլ երկուշաբթի յետմիջօրէին Շիշլի, Նազըմ Հիքմէթի անունով դահլիճի մէջ:

Այս առթիւ Էսդուգեան իր արտասանած շնորհակալութեան խօսքի մէջ անդրադարձաւ թրքական մամուլի տիրող ապատաղալի պատուութեան, օրինակ բերելով

արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին երկրի բովանդակ մամուլի պնդումը, իբրեւ թէ պատերազմը սկսած էր հայկական կողմի յարձակումով: «Հազիւ պատերազմի աւարտին իլհամ Ալիեւի յայտարարութենէ ետք է, որ դադրեցաւ այդ ստախօսութիւնը եւ սա Էսդուգեան:

Ան նաեւ նշեց թէ այս մրցանակը յատուկ նշանակութիւն ունի իրենց համար, քանի որ ան կը կրէ ոստիկանական բռնութիւնով աշխատանքի պահուած սպանուած լրագրողի մ' Մեթին Կէօքթեփէի անունը:

Միջոցառումը ավարտեցաւ Կէօքթեփէի ծննդեան օրը խորհրդանշող կարկանդակի բեկանումով:

ուել է 1,3 միլիարդ դրամ, որը նախորդ տարուայ համեմատ կրկնակի, իսկ 2018 թուականի համեմատ մի քանի անգամ աւելի է: Այդ միջոցներով նախատեսուած ենք այս տարի իրականացնել պատմութեան յուշարձանների հնագիտական պեղումների, ուսումնասիրման եւ վերականգնման աշխատանքներ: Դրանցից մէկն էլ Բերդկունք ամրոցն է, որի տարածքում ԿԳՄՍ նախարարութեան յատկացումներով իրականացուած են պեղումներ,

որոնց հիման վրայ պատուիրուել է ամրոցի վերականգնման նախագիծ, քանի որ կայ ծրագիր՝ Բերդկունքը արգելոց-թանգարանի վերածելու», ներկայացրեց Ժաննա Անդրէասէանը:

Այցի շրջանակում պատմական յուշարձանի՝ «Բերդկունք» («Սպիտակ բերդ») ամրոցի տարածքում տեղադրուել է տեղեկատուական ցուցանակ:

Բերդկունքում հնագիտական

Շար.ը էջ 14

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՍՈՒԼԻՍ**

Կազմակերպութեամբ՝

Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան

**«Լիբանանի Հայ Ժողովուրդի Ներկայ Վիճակը»**

Մասնաւորաբար՝

Պէյրութի, Հաճընի եւ Խալիլ Պատաուի Թաղամասերուն Մէջ

**Նիւթը կը Ներկայացնէ՝**

**Արժ. Տ. Ղեւոնդ Քինյ. Լոշխաճեան**

Հոգեւոր Հովիւ Պէյրութի Ս. Յարութիւն Եկեղեցոյ (Խալիլ Պատաուի)

**Հինգշաբթի, Մայիս 9, 2024 երեկոյեան ժամը 8:00ին**

**Հ.Կ.Բ.Մ.ի Կեդրոնին Մէջ**

**1060 North Allen Avenue Pasadena, CA**

**Մուտքը ազատ է**



### Հայ եւ Օտարազգի Վարպետների Գործերը՝ Մեկ Վայրում. Երեւանում Բացվել է «Չարդարվեստի Ակադեմիա» Ցուցահանդես



«Չարդարվեստի ակադեմիա» (Jewellery Academy) ցուցահանդեսում, որ բացվել է Գեղագիտության ազգային կեդրոնի պատկերասրահում, ներկայացրած են Հայաստանի, Աւստրիայի, Չեխիայի, Հունգարիայի եւ Սլովակիայի գեղարվեստի ակադեմիաների եւ մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ զարդարվեստի ոլորտում լավագույն դիզայներների աշխատանքները:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ ցուցահանդեսն իրականացվում է Սլովակիայի՝ Կեդրոնական Եւրոպայի մշակութային հարթակի նախագահութիւնը ստանձնելու կապակցութեամբ:

Ցուցադրուած են զարդերի իւրապատուկ նմուշներ, որոնք առանձնանում են իրենց զգացմունքայնութեամբ, նորարարութեամբ ու վարպետութեամբ: Իւրաքանչիւր զարդ ունի իր իւրայատուկ պատմութիւնը՝ արտացոլելով այն ստեղծողի որոնումներն ու արտայայտման ուղիները:

«Մենք այստեղ ենք, որ տօնենք այս արուեստագէտների տաղանդը, միշտ նորը ստեղծելու նրանց ձգտումները: Այստեղ ենք որպէս կեդրոնական Եւրոպայի մի մաս՝ ցոյց տալու, որ միասին մենք ուժեղ ենք եւ քաջալերում ենք նման նախաձեռնութիւնները: Շատ ուրախ ենք այս համագործակցութեան համար», - նշել



Այն կազմակերպել է ՀՀ-ում Սլովակիայի Հանրապետութեան դեսպանութիւնը՝ համագործակցելով Հենրիկ Իգիթեանի անուան գեղագիտութեան ազգային կեդրոնի հետ:

Գեղագիտութեան ազգային կեդրոնի տնօրէն Վահան Բաղալեանը, ողջունելով ներկաներին, մեծ ուրախութիւն է յայտնել, որ իրենք նման գեղեցիկ նախագիծ են իրականացնում:

«Հրաշալի առիթ է տեսնել տարբեր երկրների մօտեցումները զարդարվեստի ոլորտում: Որպէս Հայաստանի ներկայացուցիչ շատ ուրախ եմ, որ մեր երկիրը եւս այս ցանկում է: Յատուկ շնորհակալութիւն ՀՀ-ում Սլովակիայի դեսպանութեանն ու պարոն դեսպանին՝ հրաշալի համագործակցութեան համար», - ասել է նա:

է Կեդրոնական Եւրոպայի մշակութային հարթակի նախագահ, Սլովակիայի Հանրապետութեան Արտաքին եւ Եւրոպական կապերի նախարարութեան մշակույթի բաժնի ղեկավար Լիվիա Մաշովան:

«Այս ցուցահանդէսը համընկնում է Հայաստանի եւ Եւրոմիութեան համագործակցութեան սերտացման կարեւոր փուլի հետ: Երբեմն մշակույթն անտեսում է եւ սա բացառիկ օրինակ է, երբ համագործակցութեան առանցքում զարդարուեստն է: Մենք շատ կարեւորում ենք Սլովակիայի հետ յարաբերութիւնների սերտացման նման գեղեցիկ առիթները», - ընդգծել է ՀՀ Արտաքին գործերի նախարարի տեղակալ Պարոյր Յովհաննիսեանը:

Ցուցահանդէսը կը գործի Ապրիլի 18-28-ը:

### Այնթապի Հերոսամարտի 104-րդ Տարեդարձ

Շարունակուած էջ 11-էն

դաստիարակութիւնը, որ նոյն ձեւով շարունակում էր կիրառել իր Յ գաւազների վրայ: Ալեքսը ասում էր. «Հայրենասիրութիւնը կը գօրանայ, եթէ տրուեն առիթները»:

Գրիգոր Քիլէճեանը, որդին այնթապցի Սարգիս Քիլէճեանի, շրջանաւարտ լինելով հայկական վարժարաններից, ընդգծում էր հայ քրիստոնէական կրթութեան անհրաժեշտութիւնը, որ ինքն արդէն փոխանցում էր իր գաւազներին: Նաեւ շնորհակալութիւն էր յայտնում ամերիկեան կառավարութեան ընձեռած հնարաւորութիւններին, որի շնորհիւ կարողանում ենք պահպանել ազգային պատկանելիութիւնը:

Ալլէն Դիշիգրիկեանը՝ փրկիստիպա երաժիշտը, որ դեռ նոր է ընտրում իր կեանքի ճանապարհը, ունէր իր ուրոյն մտածելակերպը. նա թելադրում էր երիտասարդներին գրի առնել Սփիւռքի պատմութիւնը, որ նոյնպէս շատ կարեւոր նախաձեռնութիւն է:

Ապ սօնութեան էր հասնում հանդիսավարուհի Թագուհին՝ շնորհակալութիւն յայտնելով բանա-

խօսներին եւ ներկայացնելով գեղարուեստական բաժնի մասնակիցներին:

Այստեղ ելույթ ունեցան ոչ թէ գաղութի համար արդէն յայտնի արուեստագէտները, այլ՝ նորեկ երաժիշտները Լարք Երաժշտանցից. դաշնակահարներ Ալլէն Դիշիգրիկեանը, Պետրոս Քեսապեանը, Անդրէ Կիրակոսեանը: Տիկին Արգուսեանեանը այս երիտասարդներին նմանեցրեց ընտանեկան պարտէզի մէջ աճող ծաղիկների, որոնք պիտի մեծանան իրենց ծնողների խնամքով: Իսկ աճմանը նպաստում է նաեւ նրանց քաջալերելը եւ բեմի վրայ տեսնելը: Հայրենի արուեստագէտ Ռազմիկ Բաղդասարեանը իր ոգեշունչ երգերով եզրափակեց այս բաժինը:

Օրհնութեան աղօթքը կատարեց վերապատուելի Հենրիկ Շահնազարեանը: Բացի քրիստոնէական պատգամից նա թելադրում էր՝ բանալիները յանձնել երիտասարդներին եւ վստահեցնում էր, որ այնթապցիները անպայման պիտի ունենան երիտասարդ շարունակողներ:

Իսկ բանալիները արդէն յանձնուած էին...

### Բերդկունքի Ամրոցը Կը Վերականգնուի

Շարունակուած էջ 13-էն

պեղումներ իրականացնող արշաւախումբը ղեկավարում է հնագէտ, «Պատմամշակութային արգելոցթանգարանների եւ պատմական միջավայրի պահպանութեան ծառայութիւն» ՊՈԱԿ աշխատակից Լուսինէ Ալեքսանեանը:

Արշաւախումբի ղեկավարի հաւաստմամբ՝ հնագիտական պեղումները կը շարունակուեն յառաջիկայ մէկուկէս-երկու ամիսների ընթացքում: Այսօր «Յուշարձանների պահպանութեան միջազգային օրուայ» շրջանակներում Բերդկունքում ընթացող հնագիտական պեղումներին մասնակցել են նաեւ Գեղարքունիքի մարզի

հանրակրթական դպրոցների աշակերտներ՝ մօտիկից ծանօթանալով պեղումների նրբութիւններին, յուշարձանի պատմութեանն ու կառուցուածքին:

Ըստ հնագէտ Աշոտ Փիլիպոսեանի՝ «Բերդկունք» («Սպիտակ բերդ») ամրոցը բազմաշերտ յուշարձան է, որը հիմնուել է մեր թուարկութեանն առաջ 19-18-րդ դարերում ու գործել հազարամեակներ շարունակ: Ամրոցի դիրքն այնքան գերիշխող է շրջապատի նկատմամբ, որ միջնադարում կիկլոպեան ամրոցի փլատակների վրայ կառուցուել է մի նոր՝ ամրակուռ ամրոց, որի անունով էլ այն կոչւում է «Սպիտակ բերդ» կամ «Իշխանաց բերդ»:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
 Enclosed a check for (one year)  
 \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
 \$ 125,00 (Air Mail) for Canada.  
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
Massis2@earthlink.net (626) 797-7680



### «Ինթեր» Յաղթեց «Միլանին» Եւ 20-րդ Անգամ Յռչակուեցաւ Իտալիոյ Ախոյեան



Միլանի «Ինտերը» 20-րդ անգամ նուաճեց Իտալիոյ ախոյեանի տիտղոսը: ԱՍերիայի 33-րդ հանգրվանին «Ինթեր» խաղցաւ երկրորդ տեղը ընթացող եւ նոյն քաղաքը ներկայացնող «Միլանի» հետ եւ առաւելութեան հասաւ 2:1 արդիւնքով:

«Ինթերի» հիմնական կազմին ամբողջ հանդիպումն անցկացրեց Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը, որ դարձաւ Իտալիոյ ախոյեան առաջին հայաստանցի ֆուտպոլիստը:

Հենրիխ Մխիթարեան «Ինթերի» հետ դարձած է նաեւ Իտալիոյ գաւաթակիր եւ կրկնակի սուփերգաւթակիր:

Առաջնութեան աւարտին 5 հանգրուան առաջ «Ինթերը» վաստակած է 86 միաւոր: «Միլանը» ետ է 17 միաւոր:

### Անգլիայի Գաւաթ. «Մանչեսթըր Եունայթըտը» Եւ «Մանչեսթըր Սիթին» Հասան Եզրափակիչ

«Մանչեսթըր Եունայթըտ» հասաւ ֆուտպոլի Անգլիոյի գաւաթի մրցաշարքի եզրափակիչ:

Լոնտոնի «Ուեսթհեմ» մարզադաշտին վրայ «Մանչեսթըր Եունայթըտ» մրցեցաւ «Քովենթրի Սիթիի» հետ: Հիմնական ժամանակը աւարտեցաւ հաւասար՝ 3:3: Աւելացուած ժամանակին կողեր չեղան:

Յետխաղային 11-մեթրանոցները աւելի յաջող կատարեցին մանչեսթերեան խումբի ֆուտպոլիստները՝ 4:2:

Եզրափակիչին «Մանչեսթըր Եունայթըտի» մրցակիցը պիտի ըլլայ գաւաթակրի տիտղոսը պաշտպանող «Մանչեսթըր Սիթին», որ կիսաեզրափակիչին 1:0 «Մանչեսթըր Եունայթըտ» յաղթած էր Լոնտոնի «Չելսիին»:

### Ախոյեաններու Լիկա. Կիսաեզրափակիչի Ձոյգերը

Ֆուտպոլի եւրոպական Ախոյեաններու Լիկայի եզրափակիչի ուղեգրերու համար կը պայքարեն Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ն ու Տորթմունթի «Պորուսիան», Սպանիոյ փոխախոյեան Մատրիտի «Ռեալն» ու Գերմանիոյ անցած տարուայ ախոյեան Միլանի «Պայերը»:

Կիսաեզրափակիչի առաջին խաղին, Ապրիլի 30-ին, «Պայերը» կ'ընդունի Մատրիտի «Ռեալին», Մայիսի 1-ին «Պորուսիան» իր դաշտին վրայ կը մրցի Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի հետ:

Պատասխան հանդիպումները տեղի պիտի ունենան Մայիսի 7-8-ին:

### ՊՍԺ-ն Պարտութեան Մատնեց «Լիոնին»

Ֆրանսայի առաջնութեան 30-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն իր դաշտին վրայ մրցեցաւ «Լիոնի» հետ: Սպանացի Լուիս Էնրիկէի գլխաւորած խումբը յաղթեց 4:1 արդիւնքով:

ՊՍԺ-ն 66 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 11 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Մոնպելիէի»:

### Մեսիի Տուպլը «Ինթեր Մայամիի» Յաղթական Խաղին

ՄԼՍ-ի կանոնաւոր առաջնութեան հերթական խաղին «Ինթեր Մայամին» Ֆորտ Լոտըրտէյլի մէջ ընդունեց «Նեշվիլին» եւ յաղթեց 3:1 արդիւնքով:

Դաշտի տէրերու կազմին տուպլի հեղինակ դարձաւ աշխարհի ախոյեան Արթանժինի հաւաքականի յարձակող Լիոնել Մեսին, որ նաեւ կողային փոխանցում կատարեց Սերխիօ Պուսկետսին: Սպանացի կիսապաշտպանն առաջին կողը նշանակեց ամերիկեան խումբին հետ:

Արեւելեան Քոնֆերանսի դասաւորման մէջ «Ինթեր Մայամին» 10 խաղէն յետոյ 18 կէտով առաջատարն է:

### Մարմնամարզիկ Արթուր Դաւթեանը Դարձաւ 2024 Թուականի Գաւաթի Խաղարկութեան Բացարձակ Յաղթող



Հայաստանի մարմնամարզութեան հաւաքականի անդամ, աշխարհի, եւրոպայի ախոյեան, Ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր Արթուր Դաւթեանը դարձաւ 2024 թուականի աշխարհի գաւաթի խաղարկութեան բացարձակ յաղթող:

Տոհայի մէջ ընթացող աշխարհի գաւաթի խաղարկութեան վերջին հանգրուանին Դաւթեանը հենացատկի վարժութեան եզրափակիչին հաւաքելով 15,166 կէտ՝ դարձաւ ոսկէ մետալակիր եւ 2024 թուականի գաւաթի խաղարկութեան բացարձակ յաղթող:

Նախօրէին Հայաստանի հաւաքականի անդամ Վահագն Դաւթեանը օղակներու վարժութեան դարձած էր ոսկէ մետալակիր եւ նուաճած էր Փարիզի Ողիմպիական խաղերու ուղեգիր:

### Յայտնի Են Հայաստանէն Ողիմպիական Խաղերուն Մասնակցող Ծանրորդներու Անունները

Ծանրամարտի եւրոպական ֆետերացիան ներկայացուցած է Փարիզի Ողիմպիական խաղերուն մասնակցելու իրաւունք ստացած ծանրորդներու անունները:

Փարիզի Ողիմպիական խաղերուն Հայաստանէն կը մասնակցեն 89 քկ ծանրութեան Անդրանիկ Կարապետեանը, 102 քկ ծանրութեան Գարիկ Կարապետեանը եւ գերծանր վարազդատ Լալայեանը:

Միջազգային ֆետերացիայի կանոնադրութեամբ՝ Փարիզի Ողիմպիական խաղերուն իւրաքանչիւր երկիր կարող է առաւելագոյնը 3 մասնակից ունենալ:

Մինչ այս Հայաստանը Փարիզի Ողիմպիական խաղերուն 7 ուղեգիր նուաճած էր: 33-րդ խաղերուն կը մասնակցին հրաձիգ էլմիրա Կարապետեանը, մարմնամարզիկներ Արթուր Դաւթեանը, Վահագն Դաւթեանը, ըմբիշներ Արթուր Ալեքսանեանը, Մալխաս Ամոյեանը, Սլաւիկ Գալստեանը, Արսէն Յարութիւնեանը, Վազգէն Թեճանեանը:



### «Ռեալ» Յաղթեց «Պարսելոնային»

Սպանիոյ առաջնութեան 32-րդ հանգրուանին առաջատար «Ռեալը» ընդունեց երկրորդ տեղը ընթացող «Պարսելոնային» եւ յաղթեց 3:2 արդիւնքով:

«Ռեալ» 81 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 11 կէտ առաջ է «Պարսելոնային»:

### «Լիվերփուլ» Յաղթեց Եւ Հաւասարեցաւ Առաջատար «Արսենալին»

Ֆուտպոլի Անգլիոյ Փրեմիեր Լիկայի առաջնութեան 34-րդ հանգրուանին «Լիվերփուլը» հիւրընկալեց «Ֆուլհեմին» եւ յաղթեց 3:1 արդիւնքով:

Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխաւորած խումբէն աչքի ինկան անգլիացի պաշտպան Թրենթ Ալեքսանտր-Առնոլտը, հոլանտացի կիսապաշտպան Ռայան Կրավիչեպերիսը եւ փորթուկալացի յարձակող Տիոկո Ժոտան:

33 խաղէն յետոյ «Լիվերփուլը» 74 կէտով հաւասարեցաւ առաջատար «Արսենալին» եւ երկրորդն է: «Մանչեսթըր Սիթին» 32 խաղէն յետոյ 73 կէտով երրորդն է:





### Ցեղասպանութեան Ոգեկոչում Կլետնէի Քաղաքապետարանի շրջափակէն ներս



### ճաշկերոյթ Ի Պատիւ Գատիր Ազընի եւ Կարօ Փայլանի



Կազմակերպութեամբ ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնին, Կիրակի 21 Ապրիլ, 2024, երեկոյեան շքեղ ճաշկերոյթ մը տեղի ունեցաւ ՀԿԲՄ-ի կեդրոնին մէջ, ի պատիւ RED ֆիլմի բեմադրիչ եւ արտադրիչ, ինչպէս նաեւ գիրքե-

րու հեղինակ Գատիր Ազընի եւ Թուրքիոյ խորհրդարանի նախկին հայ երեսփոխան Կարօ Փայլանի: Ողջերթի սոցն նախաձեռնութեան ներկայ էին ՍԴՀԿ Կեդր. Վարչութեան ատենապետ ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեան, ինչպէս նաեւ կուսակցական մասնա-

### Երիտասարդական Հսկում Փաստինայի Եղեռնի Յուշարցանին Սօս



ճիւղերու, ՀՄՄ-ի, Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Հայ Ամերիկեան Խորհուրդի, ՀԿԲՄ-ի եւ այլ կառույցներու ներկայացուցիչներ: Կազմակերպիչ յանձնախումբի անունով՝ բարի գալուստ մաղթեց հանդիսավար Հերի Իւնել: Ապա ելոյթ ունեցաւ Հայ Ամերիկեան Խորհուրդի ատենապետ Սեւակ Խաչատուրեան՝ ներկայացնելով «Մասիս» հրատարակչականի աշխատանքները՝ Հնչակեան Կուսակցութեան արխիւները մեկտեղելու նպատակով:

դէս եկաւ Գատիր Ազըն եւ գովեստով արտայայտուեցաւ հայաշատ վայրերու մէջ իր անձին հանդէպ ցուցաբերուած ջերմ ու յարգալիր ընդունելութեանց համար: Կարօ Փայլան իր ելոյթին մէջ նշեց թէ հաւատացող մըն է մեր գաղափարախօսութեան: Իսկ անդրադառնալով ժամանակակից իրավիճակին, ըսաւ. «Պատմութեան հարկ է դասեր առնել եւ հարցերը այս ձեւով պէտք է շարունակուին: Շատ բան փոխուեցաւ երկրաշարժի առթիւ...: Ազգայնականներն ալ փոխուեցան...: Մենք պէտք է կա-



Այս առթիւ ողջոյնի ջերմ խօսքերով ելոյթներ ունեցան շրջանիս Վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Վազգէն Խոտանեան եւ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեան: Անոնք դրուատելէ ետք զոյգ հիւրերու Գատիր Ազընի եւ Կարօ Փայլանի օգտաշատ ներդրումներն ու հայնպաստ ծառայութիւնները նորանոր յաջողութիւններ մաղթեցին իրենց յետագայ ծրագիրներուն: Շնորհակալական ելոյթով հան-

մուրջներ շինենք...: Դժուար է նախապաշարունները փոխել: Եկէք, միասնաբար սիրով աշխատինք» յարեց Կ. Փայլան, վերապահ լաւատեսութիւն մը արտայայտելով իր եզրափակիչ խօսքին մէջ: Աւարտին՝ ներկաները իրենց հետ տարին Գատիր Ազընի հրատարակած պատմա-վաւերագրական հատորներէն: Հանդիսականները սրահէն բաժնուեցան յիշատակելի երեկոյի մը լաւագոյն տպաւորութիւններով: